

ՄԻՔԱՅԷԼ ԿԱՐԱՆԴԵԱՆ

Գ. Յ.

ԴԵՆԵՅՈՒԹԵՆՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻՔԱՅԷԼ
ԿԱՐԱՆԵԱՆ

Հ. Յ.
ՊԱՆԵԱԿՅՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



9(47-925)

Լ-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՂՄԻՑ

ԵՊՀ ԳՐԱԳՐԱՆ
Библиотека ЕГУ

ՎԱՐԱՆՅԱՆ ՄԻՐԱՅԵՒ

Վ 295 Հայ Նեղափոխական Գաղնակցության պատմություն (Երևանի պետ. համալս. — Եր.: Երևանի համալս. հրատ., 1992 — 536 էջ.

Գրքում ներկայացվում է Հայ ճեղափոխական Գաղնակցության պատմության մասին նրա սկզբնավորման ժամանակներից (19-րդ դարի վերջ) մինչև մեր օրերի 10-ական թվականները: Հանգամանորեն քննվում են այդ տասնամյակներից տեղի ունեցած քաղաքական խոշոր իրադարձությունները և դրանցում Հ. Հ. Գ. կուսակցության խաղացած դերը:

0503020913

SU0130559

ՊՄԴ 63.3(2Հ)

704(02)—92

ISBN 5—8084—0201—8

143000

МИКАЭЛІ ВАРАНДԿԻ
ИСТОРИЯ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ
ДАШНАКЦУТИОН
(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1992

ՀԱՍՏԱՐԱՎԿՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայ Նեղափոխական Գաղնակցության նշանավոր տեսարաններից մեկի՝ Միհայել Վարանդյանի այս աշխատության առաջին հատորը լույս է տեսել 1932 թ. Փարիզում: Հաջորդ հատորը հրատարակվել է տեական բեղմնիչումից հետո, 1950 թվականին: Պատեաը Վարանդյանի անժամանակը մահ էր (1934 թ.), որի հետևանքով հեղինակը չկարողացավ զործը Վարտին հասցնել, և, փաստորեն, երկրորդ հատորը մնաց անավարտ ու խմբագրվելիք վիճակի մեջ:

«Հայ Նեղափոխական Գաղնակցության պատմությունը» առաջին անգամ է տպագրվում Հայրենիքում: Առաջին և երկրորդ հատորները միացվել և ներկայացվում են մեկ գրքով:

Հուսով եմ, որ հայրուրամյա ազատագրական շարժման անշափ կարևոր հատվածներից մեկը ներկայացնող այս աշխատությունը չի կորցրել արդիական շունչը և իր արժանի ավանդը կրելի սերունդների դաստիարակությանն ու ազգային պայքարին:



Հայոց պատմութեան հերոսական շրջանը պէտք է որ գրին Առանց լացի և անէծքի, առանց անմիտ խարաղամտմաներու և անպատճառ մարգարէութիւններու...

Ինչ կը լինէր աշխարհի վիճակը, եթէ մարդիկ — ուսձիբաները — կարենային ի սկզբանէ մարգարէանալ, նախատեսել այն բոլոր սայթաքումները, ճախողանքներն ու աղէտները, որ յառաջ կուզան անխուսափելիօրէն մեծ, ազատարար վերիվարումներու ընթացքին:

Երբ Խաչակրաց բանակները տասնեւէկերորդ դարուն մէջ — վառուած, անշուշտ, նիսթական նուճումներու տխրածակով, բայց և տարւած զազափարային, կրօնական իսնդաժառութեամբ — հարիւր հազարներով կը նեւեակն զէպի Արեւելք՝ Երուսաղէմը ազատելու, քրիստոնէութեան գրօշը պարզելու, Արեւմտեան զազափարը պաշտպանելու ասիական բարբարոսութեան յորձանքին զէմ, երբ անոնք կ'երթային ճանններու պէս կոտորելու անապատներում, խողխողելու այլակրօն գահճներու ձեռքով, — չէին, անշուշտ, գուշակեր, որ այդ երկիւրտեսի մարտումներէն, իրենց կրկնակի, արիւնայից, կրքին չաղթական թռիչքներէն յետոյ, քրիստոնէութեան սրբավայրը զեռ ամբողջ իննը դար պիտի մնար արիւնարբու հորդաներու լուծին տակ...

Երբ Ալեքսանդր Հէրցեն, անչեպէս զարու վաթսունական թականներուն կ'ազգարարէր ի զՄանգոլին մէջ Ռուսաստանի ազատագրութեան մտայուտ դարունը, երբ գրեթէ եռոյն ասնները Հայր Ալիշան կը հրեւիջներ իր ազատաշունչ դարնան երգը — «Ո՛վ դու իմ վաղուց մտացումս հայրենիք. անա գարունիկդ հասն'լ է, հասն'լ» — երկու մեծանուն ուսձիբաներու մարտն անգամ չէր անցներ, որ այդ օրերէն ամբողջ եօթանասուն տարի յետոյ ռուս ու հայ ժողովուրդները զեռ պիտի սղան իրենց անզուր ճակատագիրը ամենէն զածան լուծին տակ: Եւ եթէ հրաշքով մը կրնային գուշակել, զուցէ բնաւ չպիտի շարժեր անոնց գրիչը անգամ ամենէն վեճ զազափարները շեփօրելու համար: Չպիտի շարժէին բոլոր ծայրերում — և անգամ գուցէ Ռուսներն ու Վօլթերները չպիտի հրահրէին Բրանսական Մեծ Յեղափոխութիւնը, որ ազատութեան անտարանը բերաւ աշխարհին և ազատարար շտապով անցաւ երկրագուն-

դի վրայէն, բայց և նիւթնց արեան անվերջ հեղեղներ, ամենէն տաշ
Յրանալում՝ Բոնապարտի մը բռնաւոր զիկտատութեան ընթացքին:
Պիտի կնոջ անէր որեմն համաշխարհային շտապզոյժութեան անիւր
և մարդուփրկի յափանձորէն պիտի զեզներ խաւարի ու սորիւթեան
արիւնագանգ անզունզներուն մէջ...

Յեր ևն, անշուշտ — և պիտի լինին — անակնկալ ու այլանդակ զար-
տուղութիւններ մարդկային պատմութեան ընթացքին, յետախաղաց
շարժումներ, որոնք — մըլէ իսկ — այնքան շարաշուք անզորարձուներ
ունեցան մասնաւորապէս մեր հայկական ճակատագրին վրա... Այդպիսի
մէկն էր կամփր կոչած յեղաշրջումը Ռուսաստանի մէջ, որ 1917ի հոկ-
տեմբերին մէկէն ի մէկ խառնեցուց Փետրաբրեան Յեղափոխութեան
պայծառ արևը, խոշտանցեց մեր նորմալի ազատութիւնն ևս — և զար-
բրեց սօցիալիզմի անունով բռնակալութեան ամենէն մոռալ, ազատա-
սպան սիտանմանքէն մին: Ըն նոյնպիսի կործանարար անակնկալ մըն էր
աշխարհի համար Մեծ Պատերազմը, որ յարմարագոյն առիթը տաւ
մեր ընդհանր արարքերուն և բնանշեղու հայ ժողովրդայն, ճիշտ այն
պահուն, երբ Հայաստանը կը վերածնէր. Համիտի նիւթած անբակներէն,
կը քնակօխեր նոր զարաշրջան — ազատութեան ու բարօրութեան — երբ
այդպիսով Հայկական Յեղափոխութիւնը, ի զէմս Հայ Յեղափոխական
Դաշնակցութեան, թան տարակա օրհասական մարտնչութիւնը երբ կը
հասնէր վերջապէս իր բաղձալի հանգրանին...

Ըն այնուամենայնիւ, պատմութեան մեծ պրօզեր — Նայած այդ
բոլոր գարտաւղութիւններուն, յետախաղաց և անբիշ ծփանքներուն —
բնզհանուր ամամը գրական է, շինարար, ստեղծագործ, նա կը տանէ
վերջ ի վերջոյ, բայց առ բայց, զէպի ազատութեան ու ժողովրդագիտու-
թեան լազթանակը՝ բնզգէմ ամէն տեսակ կամայալատութեան ու բրո-
նութեան...

Իրենք պատմութիւնը Անցնալի պայտամուներ — Հերոսներու և
Հերոսական գործերու պայտամուները — ամենագորաւոր խթաններէն է
ազգերու յատկապէսութեան: Գալոց սերունդները շատ մը հրահանգիչ
դասեր պիտի քարեն հայ յեղափոխական տարիգրութեան այդ սրտաուշ
էջերին, — դասեր ինքնամերձ զոհողութեան, քաղաքացիական արիու-
թեան և շինք, բարձրասաց գաղափարականութեան:

Գալոց սերունդներուն համար անիւն ներշնչումներու անսպառ ազ-
բիր պիտի լինի այն տիտանեան սերունդը, որ ասկէ քառասուն տարի
տաւջ իր ձեռքն առաւ հայ ազատարարական շարժման զութեան և ան-
վըհատ բալեց իր ճամբան անզունզէ-անզունց, տագնապէ-տագնապ

հերկեց, անքաց ու նահատակեցաւ ամենէն նիւրական գաղափարին
համար, ամենէն զոնգակ միջազարմ...

Հարուստ է, այո՛ւ, Հերոսական սիրագործութիւններով նաև մեր
փոքրիկ համայնքը: Այն ազգը, որ տասնեակ տարիներ տաւ բարբարոս
Ասիոյ խորքերում պարզեց պատմութեան զրօշը, այն ժամանակ, երբ
իր շուրջը — Անգորայէն մինչև Քիրդիստան ու Քեհրան, Մակեդոնիոյ
գաշանրէն մինչև լուեական ծովկեղեր — այդ ազգը արժանի է դասելու յա-
նաչաղէմ ու յեղափոխական ազգերու շարքը, մարդկային իրաւունքնե-
րու համար պայքարող ու զոհարեցող ազգերու շարքը:

Ըն այն մեծ Շարժումը, որ հակառակ աշխարհագրական ու քաղա-
քական միջազարի բիրտար խոչընտներում, տաւ այնքան շրեղ
գրագներ ռազմական կորովի ու քաղաթեան և որ իր բոլոր զարհու-
րանքներով հանդերձ ստեղծեց նոր հայայրին մը. կոտորակած, բայց
կանգուն, բարոյապէս աւելի բարձր, պատարտ միշտ կուրծք տալու իր
իրաւունքներու պայտամութեան համար — Հոծ, համախումբ հայու-
թիւն մը, որ Բնաշխարհի զնդանին մէջ շուրջը ճկի իր պարանոցը նորա-
գոյն բռնաւորներու ստիւն, շուրջը լքել իր ազատաշունչ և հայրենա-
շունչ հաստամըր — այդ շարժումը իր պատուար տեղն ունի համա-
արդկային շարժումներու տարիգրութեան մէջ և արժանի է. հետևա-
բար, որ զրի տանի ու յանձնի յետնորդներուն:

•••

Յիզախ գործ մըն է՝ մէկ-երկու հատարի մէջ ամփոփել քառասուն
տարեան պատմութիւն: Պէտք են թերևս քառասուն հատարներ: Ասկէ
20 տարի առաջ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մեծագործը դա-
մը ընթացքին, Պետերբուրգի մէջ, ցարական կառավարութիւնը կամե-
ցաւ պարզել Ռուսաստանի աղէկ հայ կուսակցութեան բնզամներ քանի
մը տարեան գործունէութեան պատկերը, չոր փաստաթուղթերով, և տաւ
ոչ պակաս քան ևօթ ահագին հատարներ: Ըն այդ՝ միայն կովկասեան
հատարի պատկերն էր, բուն իրականութեան մէկ թույլ արտաշայտու-
թիւնը:

Հայկական Յեղափոխութեան շրջանը զեռ չէ գոցած: Ի՞նչ պիտի լի-
նի շարժման փոխձանք, ինչպէ՛ս պիտի ներկայանայ վերջին զրազը
այն երկարածից, արիւնտ Դրամային, որ կը թաւալի յետն տարիէ ի
վեր և կու՛ց զեռ պիտի տեւ որիչ տասնեակ տարիներ... Մեր զուգե-
ները կամ թունդը կ'իմանան այդ:

Անո՞րք միայն ի վիճակի պիտի լինին — տեսնելով Գրամայի վերջին արարածքը — ճանգամաժողովն ուսումնասիրելու և արգարքէն դատելու բովանդակ գործողութիւնը, բայտ արժանաւորն զնահատելու անոր այլազան դրագները, զկարգն ու զերակատարները: Անո՞րք միայն պիտի կարենան լիովին օգտագործել Կուսակցութեան արշիվները — և արշիվները սղջ նորագոյն մեր պատմութեան, որ այնքան սերտօրէն ճիւտած է ազատագրական շարժման եկեղէններուն հետ, Գաշնակցութեան հարուստ ու յուզումնային պատմութեան հետ:

Ար Կուսակները միայն պիտի ունենան այդ նուրբ, զժարին, պատասխանատու աշխատանքին համար անհրաժեշտ հոգեկան անդորրութիւնն ու պաշարները:

Հ. Յ. Գաշնակցութեան մանրամասն ու լիակատար պատմութեան հոգը կը մնայ, ուրեմն, զայի՞ք սերունդներուն:



Երկար է շարժման ճանապարհը, լի զժարին զիջազներով ու խորհրդարաններով... Այստեղ շնք կարող մտնել այդ ճամբու բոլոր խորշերուն մէջ: Ստիպած ենք կանգ առնել միայն դիտարը հանդուաններուն վրայ, ցուցադրել պատմութեան կարեւորագոյն դրագները և բանալ թիւշատ ամբողջական զաղագրութեամբ Կուսակցութեան կատարած պատկանելի աշխատանքի մասին — Բուրքիս, Կովկաս, Պարսկաստան, Արտասահման — հրատարելով մանրամասն նկարագրութիւններ, ընդարձակ քաղաքներ, վերլուծումներ և մեկնութիւններ:

Նմանապէս, Յեղափոխութեան հազարաւոր զինուորները կան, մեծ մասամբ նահատակ, որ ընկեր են այդ զարհուրելի Գողթթայի ճանապարհին, բառատուն տարիէ ի վեր, և որ շին կարող ամենքը տեղ գտնել այս գրքին մէջ: Հայտնի ազատութեան շարժումը իր խիզախ ու արիւնալի թոփշներով, ինքնապաշտպանութեան զժարին, ու մեծագոյն ճիւղերով անոնց բոլորի հաւատարման գործն է: Ո՛ր մէկը խորթ, օտար է մեզ — ապրե՛ր ենք անոնց հետ ամբողջ տասնեակ տարիներ, մտն կամ հեռու, շրջապատած անոնց պաշտելի ստերներով — ամենէն խոնարհազոյն իր յուրի պատմութիւնն ունի, որ կարող է արցունք բերել ամենակարծի աշխարհ: Սակայն գրքի ծաւալը կը հարկադրէ կանգ առնել միայն դիտարը դերակատարներու կամ տիպար-զինուորներու վրայ, լրօնութեամբ անցնելով, տարբարխտարար, ուրիշ բազմաթիւ, օտանուն հերոսներու վրայէն:

Այս շարժման պարունակութիւնը այնքան բարդ է և այլազան. —

խօսքի ու գրչի պրոպագանդ, կազմակերպական աշխատանքներ, ծրագիր ու աշխարհայեացք, մամուլ ու դրականութիւն, զէնքի արհեստանոցներ, դրամական և զինական Փոզներ, զէնքի ու ռազմավարութեան գիտնականութիւն, ժողովուրդի զինում ու մարտուն, ինքնապաշտպանութեան կոնիներ ու ազատամբութիւններ, տերրօր, ցուցական գործունէութիւն, խաղաղ ու զինամ ջոյցեր, դատադրական, քառորկերկրայէ աշխատանք, արհեստակցական միութիւններ, կոփ ըսական իշխանութեանց ղեմ, կոփ տեսական անշումներու ղեմ, կոփ գրացի, յարձակողական խուժաններու ղեմ, կոփ ներքին ամէն տեսակ ցեցերու ղեմ — լրտեսներու, մտանշներու, դատաններու — կոփ հասարակաց անտարբերութեան, բնակիչների ղեմ... Միևնույն ժամանակ՝ «գիւնազտական» աշխատանք, Հայ Դատի պրոպագանդ արեւմտեան աշխարհում, հրատարակութիւններ օտար լեզուներով, հայասիրական շարժումներու կազմակերպում, յարաբերութիւններ և համերաշխութեան բանակցութիւններ զրացի ազգերու հետ, միջազգային համագումարներ. ապա նաև — այդ ծանր առաքելութիւնն ևս Գաշնակցութիւնը բառասուն տարիէ ի վեր նպարտութեամբ տարեր է իր ուսերուն վրայ — կուլտուրական, շինարար աշխատանք, զարդոցներ, զրագրան-ընթերցարաններ, հանրային այլ և այլ ձեռնարկներ, անգամ ճամբուններու բացում (հայ-թաթարական կոնիներու ստեղծ), կենդանի մասնակցութիւն բոլոր հայալից գործներու մէջ, ժողովրդական շահերու պաշտպանութիւն, լեզուափոխական առեւտրներու դատադարութիւն, խաղաղ, անզուլ բարոյութիւն և սերունդներու կրթութիւն ու դասախարակութիւն, երկրի մէջ — հայրենիքի բոլոր երկը հաստանկարում — և երկրէն դուրս, ամէն տեղ, ուր կ'ապրին հայութեան հոծ զանգածներ: Վերջապէս՝ պետական շինարարութիւն պատասգրած հայրենիքի մէջ:

Վիժիարի աշխատանք մը... Գործունէութեան այդ բոլոր ձևերուն, ինչպէս բարի, չպիտի կարենանք ընդարձակ տեղ տալ այս տեսութեան մէջ:

Չպիտի տեղ տանք, բնականաբար, և մեր կուսակցութեան մեծ ու փոքր հասարկութիւնու արձանագրութիւններուն, երկրի ու զազութիւնու Ընդհանրու ու Երջանային ժողովներու երկարաշունչ, ստեղծ ամբողջ միտներ անկող, տեղային վիճարանութիւններուն:

Չենք կարող, օսական — անգամ այս հակերթ դրածքին մէջ — զէթ թուցիկ ակնալի շնեղն հայ ազատագրական շարժումներուն ու զաղափարային հոսանքներուն վրայ՝ նախ քան Գաշնակցութիւնը: Քաշի պատմութեան թէլը 1890 թականէն, կը նշանակէր ցուցադրել նստուանքը, ասանց պարզելու պատճառները: Քիչ չեղան մարդիկ մեր ազգային

դժբախտութիւններու օրերուն — և ոչ միայն աշտոտ հակառակորդներու շարքերում — որոնք թերեւ համոզած էին և կ'ողջին հաստացեալ, թի հայկական շարժումը աւելորդ պերճանք մըն էր, կամ, լուսազոյն պարագային, վաղածամ էր, շնասունցած, թէ նա իր ծագման պրոցէսի մէջ շուներ բնաւ այն երկաթէ պատճառակաւութիւնը (determinisme), որ կը դիկավարէ ուրիշ ազգերու նոյնորինակ շարժումները, թէ հայ ժողովուրդի կացութիւնը օսմաննան ուժիմի տակ բնաւ այնքան անհանգուրժելի ու յուսահատական չէր, թէ կարելի էր և պէտք էր տոկալ ու համբերել, թէ, մէկ խօսքով, Հայ Տեղափոխութիւնը շուներ լուրջ հիմնադրում, թէ նա պայթեց ու գահավիժեցաւ, որպէս փոթորիկը՝ ջինջ, անամպ երկրնքի տակ, շնորհի քանի մը մոլիտանոյ աղանդաւորներու խթանուն որոշումներուն...

Մ. Վ.

Պարիզ, 1931 Սեպտեմբեր.

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ ՆԱԽԻԱՆ
ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Շարժման ձեւուղի.— Իրականութիւն և գաղափարային խնդրումներ.— Ծարժման նախակարգաւորներ.— Խիժման և իր «վանդոյժ».— Ազգային Սահմանադրութեան լոյսերն ու ստեղծերը.— Ընթացատարումի ձայներ.— Վասպուրականի շարժումները.— Ընթացատարներ.— Չարտնչեցո.— Գումրիկեան.— Կարեւոյ ցոյցը.— Կովկասեան տրամադրութիւններ.— Մոսկուայի խումբը.— «Ազատութեան Անտարք».—

Հայ ազատագրական շարժումը ծնունդ է երկու տեսակ հոլովոյթի, երկու շարք ազգայիններու.

1. Իրեւոյ հոլովոյթ (էտիպիան).

2. Գաղափարեւոյ հոլովոյթ:

Մէկը միւսի անհրաժեշտ լրացուցիչն է:

Իրեւր, կամ ըսենք՝ իրականութիւնը, ժողովուրդի մը առօրեայ կեանքը բոնապարտական լուծին տակ՝ կարող է լինել ծանր, տանջալի, անհանգուրժելի, բայց այդ ժողովուրդը չի լուրիւր, չի փոթորկիւր, երբ չկայ տակաւին Ոչ-Գաղափարը, որ կուզայ անոր մտաւորականութեան թեւերուն վրայ, որպէս թարգման, անգրադարձում նոյն գծեղակ իրականութեան, կուզայ որպէս պատմութիւն, գրականութիւն, քարոզչութիւն՝ առաջնորդելու զանգամները դէպի լոյս ու ազատութիւն:

Հինգ դար գերութիւն ապրեցաւ հայ ժողովուրդի մեծ զանգամը օսմաննան տիրապետութեան տակ, առանց ձէն ու ծպուտ հանելու, վաստիկ կ'ապրէր գրաստի խորունկ անգիտակցութեամբ, կը դիտէր լուծն ու տառապալարը, որպէս երկնադար, անշեղելի մի նակատագիր: Կը պակսէր խրան-գաղափարը, կը բացակայէր դրի, խօսքի, քարոզչութեան լուսարձակ շահը:

Բայց նոր գրաստային անխօսվ կենցաղը կը շարունակէր և այն ժամանակ, երբ այդ շահը կամացուկ արդէն բարձրացեր էր հեռու հուփ-զոնիկ վրայ, — սակ է ութուն տարի տասայ — երբ վենետիկեան շուրիւրէն դոս բամբերով կը հնէր նահապետի բըրտոս բնարը:

«Բամբ որտասանը», «Աւարայրի Բիրտը», երկու Մասիսներու խոր-հրդաւոր դրոյցը, Ասպ Մասիսի ամպրոպագոս որտունները կը մնային «Չայն բարբառոյ յանապատի» ամբողջ տասնեակ տարիներ:

Չայն բարբառոյ — և «Երժուի Վասպուրականի» ողնշուշ բար-զները անցեալ դարու 50ական, 60ական Քալաններուն, երիմեանի, Սրտանաւանի, Քոխմախեանի, Վարզաի մեծ ու փոքր արծիւներու խանզովաւս գրածքները, Ռուսիսեանի, Նալբանդեանի, Փէշեկթաշլուսեանի հայրենաշու: առկեր...

Իրիկանօրինը հասունցած էր, պատրաստ էր բնզունելու և մարտելու ազատարար գազափարները: Ամենամեծ բանաստեղծներն սն-զոր էին սակ իրենց քնարի ուժով փշրելու միջկուսիկեան ու անտարբերու-թեան ստոյլը... Պէ՛տք էին որեւէ ազգակիներ:

Պէ՛տք էր իրենու հոլովոյրը: Պէ՛տք էր փոճորիւմը անտեսական կեանքի մէջ, աննախընթաց տակնուվրայումը մամանեան կայսրութեան մէջ, պէտք էին բալկանեան ցեցումները, Բուս-Քրքական պատերազմը, Բուլղարիայի ազատագրումը, Քուրդիայի անզամահատման յարձուռն պրոցէսը, Բերլինի Վենձաղովը, 61-րդ յուզումը և այլն, և այլն:

Եւ ահա, երբ այդ բոլորը կատարուեցաւ իրական, առաւելյակաւ աշխարհի մէջ — Քուրդիոյ և Հայութեան կեանքի մէջ — երբ «Քիւրանդ Մարդը» գեանատարած փուցցա Ռուսաստանի ստրկերուն տակ, յօշոտ-ւեցաւ ու հասաւ հոգեվարքի դուրս: Երբ Բուս յողափեան բանակը, հայ գորավարներու առաջնորդութեամբ զնց պարզելու իր որոշը էրթրումի մէջ և քիչ յետոյ, Վենձաղովի որոշումով, միացուց Քուրդաստանեանի մէկ մասը իր հայկական հողերուն: Երբ պատերազմի հետեւանքով հրոյ ու սրոյ անրակ եղան Հայրենիքի բնզարձակ տարածութիւններ թիրտ ու թուրք հրոսակներու ձեռքով, երբ բուլղար ժողովուրդը, սակի անմշակ, յետամնաց բան Հայը, շնչին զոհարերութեամբ թօթափցը դարուոր գե-րութեան լուրը և զարձակ ազատ, անկախ պետութիւն: Երբ օսմանեան կատարութիւնը, իր երեւոյն զիրքերը պահպանելու և օտար միջա-մբոտութիւններէ մի անգամ ընդմիջեալ ազատելու համար, կրկնապատ-կեց իր նշշումներն ու կեղծքումները հպատակ հայութեան դէմ, հիմ-նեց կազմակերպւած թայանի ու սպանութեան սխառեմ մը, նպատակ զնկով իսպառ անզամալուծել ու երկնակ շրջանել հայ տարրը արեւ-լեան վիլայէթներէն: Երբ նա ազատ ազգաբազկ կոչեց Քիւրտերը այդ

հայաշինչ զործի համար, հրահրեց բոլոր գիշատիչ ախորձակները և հրէշուտը չափերու հասցուց առեւերու կործանարար մեքենան: Երբ օս-մանեան մեծկամփն Սահմանադրութիւնը վիճեցաւ (1878ին) և 61րդ յուզումը, պահ մը յուսադրելէ և խանգավաճել յետոյ, զնաց մրտափելու դիւանադատական արշիվներուն մէջ: Երբ ստրուկ ցեղի բոլոր կոչներն ու աղբւսանքը Քուրդիոյ տէրերուն ու աշխարհի զօրատրներուն՝ ապար-դին անցան և Հայաստանցի ժողովուրդը, լրած, յուսադի, մատուցաւ շարժարների բոլոր ձեւերուն՝ աշխարհի ամենէն բարբարոս ուժիմիքն սակ, — այն ժամանակ ահա՛ մայ հոլմէն ալ փոփոխեցաւ, հայ գրա-կանութիւնը իր նոր բանաստեղծներով, վիպասաններով, հրապարակա-գիրքներով հնչեցուց, մրկավաճախ աճողանցի պէս, վշտի ու բմբոստացու-մի շեփորը — և հնչեցուց ոչ այլ եւս «անապատի մէջ»... Հայ ժողովուր-դը, և դէմա իր զգայուն տարրերու, ունկնդրեց շուրքի ձայնին, հասկցաւ և որդեգրեց յեղափոխական կարգախօսը:

Չենք արձանագրքեր մէկ առ մէկ անուններն ու զործերը բոլոր Դան-վիրաներու: Շատուր են դշտն ու ազատութեան երգիչները նոյնիսկ նա-խայեղափոխական շրջանի մէջ:

Չենք կարող, սակայն, չշիշատակել մէկ բանիսը:

Եւ ամենէն առաջ, երիմեան Հայրիկի մուսան էր, որ դեռ բալկա-նեան պատերազմի օրերուն, դեռ Կայմերու հեղինակէն առաջ, ողբամայն գայլայլներով կը փոզճարէր հայ վիշտն ու ցատումը՝ վան բազակի խոր-հրդաւոր հրդեհին առիթ:

Ականջ դրէք. թո՛ղ անգամ մըն ալ կարդան. լսեն հոյակապ վեղա-բարտի այս ցնցող երեմիականք բոլոր անօրն — աղէտ ու դիտուն — ք-րոնք տասնեակ տարիներ ի վեր կը հոլովեն տարօրինակ զազափարներ նախայեղափոխական շրջանիս վիճակին շուրք:

Ահա թէ ինչ կը դրէր յիստեռնօք տարեկան երիմեանք, Հայոց աշ-խարհի ամէնէն իրազեկ, հասուն ու հեղինակաւոր քաղաքացիներէն մէ-կը — իր կարմրակապ Վանզոյճին մեջ՝):

Առիթը վանալ զարհուրելի աղէտն է — շղթայաղերծած նեկզ թըշ-նամու ձեռքերով — բայց երկր՝ ողջ թրքահայ ժողովուրդի անօրինակ մարտիրոսութիւնը: —

«Չգիտենք քո մեզքն ի՞նչ էր, ո՛վ անդէն և հուր հաղանդ ժողովուրդ վանայ, դու ոչ զէնք ունէիր և ոչ երբեք բմբոստացար տիրող զաւազա-»

* Տպւած 1877ին Թիֆլիզում, Քուրդաց վալազցուկ Սամիմադրութեան մեղա-լուան ընթացքին, «Լապտեռ» հրատարակութենէ եօր տարի առաջ:

նին զէմ. քո հաստատութեան շափ հինգ հարիր տարի է և քո զկեր միայն խօսին ու արօր, արեւտ և վաճառականութիւն քո զբազումն էր. և միթէ՞ այս եղև հաստուցումն քո հաստատութիւն չպատակութեան:

Քուրբեստանի վերանորոգ սամնանըութեան զո՞ մի պէտք էր և այն փառաւոր զո՞ զու մատուցիր, ժողովուրդ Հայոց...

Ո՛հ, նշարակով բոլոր մարմնույց երակները բացին, թոյլ ափն, որ զու այնուհետև տակաւ տակաւ մեռանիս շարաշուք աղքատութեան մէջ. և քո երակահաստներ շքմեղա լինելով, աշխարհի առաջ ձեռքերինն լաւան և ասեն. «Քաւեալ եմք մեք յարենէ զորս»...

Ողորմի՛ մ բեզ, ժողովուրդ Հայոց, ողորմի՛մ, արգիօք շաւազոյն չէ՞ր բեզ, որ միանգամ մեռնէիր և կենէր քո հանգստեան զերեզման... քան թէ այսպէս ի պետին թալկանալով, արհեստագործ մեռնէ... Մինչև երբ անասմ ընգ, որ ինկնազան մեռնիլ սուրվիս. աշխարհ սուրկեցան այդ դասը, իւր մեղանակն առաւ, զու զիս անուս մանուկ մնացիր...

... «Ո՛վ Գուրան, Գուրան... ես չգիտեմ, թէ շաքախախտով, շախտախտով, ի՞նչ շահեցան քո որդիները... Քան թէ թշնամադիր ողորմ կը գրեմ, ես Քուրբեստանի աշխարհին մի հայ զաւակն եմ, ի մանկութեան անտի երկրի յաստղորմութեան միշտ սիրահար...

... «Նաստանեւ՛, ով Քուրբեստան. սուրն ու զանակ քաղաքակրթութեան պատաններն մէջ դիր. զիցցիր, եթէ շանաս միշտ քո վաստակաւոր եղն իւր վարած ակօսին մէջ մորթիլ, ի՞նչ կը լինի արեւունսեռ քո շահն — ոչինչ, միայն միսն ու կաշին և յայնժամ զու անպան ուրեմն կը յուշարեիրս և աւա՛ղ կը տեսնես, որ երկիրը անմշակ մնացեր է, հացին ու զանձին սո՞քր կը տրէր»...

Եւ զարձալ Խորմեան բմբոստացումի հրաւեր կը կարգայ Քրբաճալերուն. —

— «Դու գիտես, ո՞վ հաստատութիւնը կը ժողովն ու կը մեղազրեն զքեզ, երբ կը տեսնեն, որ խիստ անմոռնչ և անզգայ կը լինիս հաստատութեանը մէջ, մինչև անշուք, անբարբառ զիսկ մը կը դատաստ զու, այնչեղ որ քու պարկեշտութիւնը կը երասակն և կիթխոտնով կանցնին վեայէլ և զու շնս իմանար: Միթէ՞ գոհե՛նայ կու ես զու աշխարհիս երեսին. ես էլ կը դատեմ զքեզ, թէ այդչափ ստրկանաս և ազարտես մարդկային ազատ պատիւ:»

Կենդանի բողոք մըն է և «Հայդուժ»ը, գրած Արաշկերտի և այլ վայրերու շարք ու անբաժնի առթիւ: Ընչ լայնափոխական գրականութեան ա-

մեննէն պաթիթիկ էջերէն մէկն է: Կողքայ Խորմեան հայ բնասնական արբուսութիւններու պղծումը, կողքայ այրեռու մեղի, անպատիւ կրաւորակաւորութիւնը և կը նախընտրէ հայոց ազգովին բնաշնչումը...

«Գտեմ՛րք Հայոց, բիր երանի կուտայի ձեզ, թէ նոր Շահ Աբրահամի զար գծեզ ի գերութիւն վարէր և զուք երթալիք միահամուտ և կամակար թփուէիք Երասխայ գետին մէջ... քան թէ կուտական արեան մէջ թաթախելով, նշաակելի գծեզ վատշուէր Քիւրտին վայրագութիւն...

«Ողբամ զձեզ, Հայոց մայրեր, որ կորուսիք ձեր լծակցն ամուսիններ և սերական դաւակներ... Միթէ՛ այժմ կ'ապրիք զուք և լաւագոյն չէ՞ր մեռնիլ, քան այդ շարքովիշտ կեանք... Քաղաքաղուչ, հուժկու այրեր կը մտանան իրենց բնասնական պատիւ մահու շափ պաշտպանելու...

«Բարեկանցայ փոքրիկ հօտին փոքրիկ հովիներ, ո՞վ քանտար... առէ՛ր իջեցուցէր ի վայր բնոց ձոց և ընդ ցից հանեալ հայոց սօսանման կրտստարդներ... Ո՞վ Բարեկանցայ զքաջառ որդիներ, վայրագ խոտն զձեզ կորտորեն... զանակն առաւ և միահամուտ մորթեց զձեզ... զուք անխօս, անմոռնչ, անշարժ մնացիք, որպէս ուշիար իւր կտրին առաջ... Այս աշխարհիս օրէնք, կարգ ու խզմտանք այսպէս է. մարդիկ... պիտի մորթին, երբ շունին խեկիկչ եղչիր, որ ցուլի նման ողորեն իրենց կտրիչներուն զմ...

«Յո՛ւշ, յո՛ւշ, ո՞վ Հայոց ողջ ու մնացորդ որդիներ, զիս պիտի մորթիր, քանի որ անզն, անեղջիր, անասպար կ'ապրիք ... Ո՞վ զու մահաւոր և հիմա՞մ հիւանդ... թէ ստույգ ազատութիւն կը ցանկանաս, «ն, ուրեմն, փոքր ինչ խլորտի մահանդ մէջէն, ինքնաշարժ եղիր. ա՛հաստիկ Աստուծոյ մասն ու հրեշտակ աշխարհիս ինչպիսիսութեան աւազանին շուրու կը յուրեն. ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն ազատ կը լինի ... Ես իրբեւ զաս, խօսեմ քեզ, որ զու խելամառ, թէ քանի թանկ է ազատութեան զին. աշխարհիս Փրկիչ զայն իւր խառով և արհեմով զնեց. նոյն գունակ մեր նախին բացեր Եկեղեցոյն և Հայրենեայ ազատութիւն մահով և արհեմով զնեցին: Միթէ՞ զու ցանկալի ազատութիւն առանց զու՞նի և արեան, ձրի ստանալ կ'ուզես»...

«Կայծեր» կան էջեր են... Եւ Բաթթիի Կայծերու մէջ զվար և գտնել ապստամբութեան ակնի բացորոշ, ակնի ցնցող քարոզ ու յորդոս ինչպէ՛ս զրէր, ի՛նչ ա՛հարկու շեշտերով պիտի խօսէր Վարազի բմբոստ Մարգարէն, եթէ գրաբնութեան կայակներէր և մասնակն երկալը թրքաական իշխանութիւններէն՝ չկաշխարհիս իր զրիւր... Այդ քարոզները, ակնի վարաբարութեան ձեւերով նա մղեր էր զին 60ական թականներուն

իր «Արժի» մէջ, իսկ այժմ, բաղանեան ազատամարտիկաց ու պատե-
րագործ արհաւիր, անոր ճայրը ահազանգի շեշտ մը կ'առնէր:

Եւ նոյն ահազանգը կը հնչէր թրքահայոց մտաւար կեցրոս — Կ. Պոլ-
սէն: Ուրիշ արհաւիրս վեղարատը, Եղիշէ վարդապետ Ալվազեան, իր
հրիմեան Հայրիկին ձայնակցելով, հետեւեալը կը գրէր (1878 թ. Ապրիլի
29) Փետրի մէջ, որ 70ական թականներու վերջերուն ժամադրագայթն
էր հայ ազատաստեղէ երկուսասարգութեան.

— «Շալոց ազգի անմիտ երկշտութիւնը մինչև այն աստիճան հա-
սած է, որ իւր թշուա փնտակին վրա խոզովելու նշան անգամ չի ցուցներ:
Երբեմն իւր յուկերը Մասնանազարութեան վրա դրած էր, աչսոր ալ իւր
բոյրը ակնկալութեանց կեղերուն բրած է դարտցները և կը սպասէ, որ
դարտցներէն գտնէ ազատութիւն: Բայց միթէ՞ դպրոցին և մէջ կը ստրկի
հայն արհեստաւոր քիւրտին թուրք շախախտի... Պաշտպանել պէտք է
ազատութիւնը, ինչ միշտեղով ալ ըլլայ, եթէ բարոյական ազգացութեամբ,
եթէ բանութեամբ, եթէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիք փրկի»...

Նոյն Փետրի էջերուն մէջ, Պարտ և Մարտ խորագրին տակ, Եղիա
Տէմիրճեպաշեան կը գրէր ազատաշունչ ալլարանութիւններ: Քսանկերոզ
գարը — կ'ըսէ նա Միլիտայի ուրակահի բերեով — պիտի բերէ ի շարս
այլ ազատութիւններու՝ նաև Հալոց ազատութիւնը: Նա պէտք է լինի
զորարեր մեծագոյնը...

— «Այն բարոյական սկիզբներ, որք կոտնահարին այսօր, պիտի
փնտպեան այն վեհագոյն դարին մէջ, այն ժողովուրդներ, որք մի ան-
միտ ինքնամալալութեան տակ են այժմ, շափահաս պիտի լինին և ինք-
նագոյութիւն պիտի վարեն իւրեանց ճակատագրի. այն ժողովուրդներ, որք
կը հնձեն լուծի տակ, պիտի փշրեն իւրեանց շղթաներ... Չե՛ս նշմարեմ
այն աշխարհը, որ կը նստագայլը Մասիս գագարին վրա»...

Չխօսիք «Արժուի» Վասպուրականի ճրատարակութիւններու մա-
սին, լինելնը նրիմեանի պատրիարքութեան օրով դեղած «Շախախտա-
րութիւններու տեղեկագիրները», իր արհեստ ուսիրներու նկարագրու-
թիւններով: Արդոյց մասին խօսելու ենք արդէն շատ անգամ: Անա ազա-
տախօս վերթ մըն ալ 1871 թականին, որով մէկ թիւ դիպածով մնացեր
է մեր դիտանին մէջ. —

*) Փետր, 1877 թ. Մարտ 10:

«Մամուլ» թերթը (Արձագանգ հասարակաց կարծեաց) իր 1871 թ.
սեպտեմբեր 30 թիւն մէջ, ամսուան ուսիրները արձանագրելէ հետք, հետե-
ւեալ տողերը կը գրէ. —

«Երեթէ անհնար է մի առ մի թելի այս ամսուան ուսիրներու թիւն-
ներն (հոսքը Վանայ սանճակի մասին է, Թերթն ալ ըստ երևոյթի կը
հրատարակէր Կ. Պոլսոյ մէջ Մ. Վ.)... նաև կուսակցութիւնները, որոնց
մին է հոթն տարեկան կոչս ազգիկ մը տանկէ պղծելը ի նախատինս
ազգին: Ասոնց համար ազգին մէջէն ևս բուսական մարդիկ մ'արտաւած՝
կրօնափոխութեան խորհուրդներ կը լղանան... Թերեւս ազատութիւն մը
ըլլայ...»

«Վանայ կողմերը ասոնք (կակնարկէ թուրք-քիւրտ հրատակներու
վրա Մ. Վ.) քիճերեուն փշած ատեն կը քաշեն, կը սպանեն, կ'աչրեն, կը
պղծեն, կը կոզորտանեն... Մինչև հիմա լրագրիները բիւր անգամ ասոնց
բարբարոսութիւնները հրատարակեցին, պուրկեղտն քար սերտը շար-
մեցին, քիճանուր ժողովին անդամ իւրիշք լիսայնեցին, Վանեցի պատ-
րիարքը քունէն շարթնցուցին, անշարժ քաղաքական ժողովը տեղէն լը-
շարժեցին»...

Անա գաւառացիի դատալիճիսը Ազգային Մասնանագրութեան դէմ...
Ու կը շարունակէ «Մամուլը» —


«Ընթերցող էֆէնդի, անանկ հայ եմ շուկով պարծիլ ու ինքզինքդ
դիցազնի մը տեղ դնելով խրոխտալը խեր շրնիւր: Հայուն պարծանքը
լինաց, պատիւն ալ լինաց, ստացածքն ալ լինաց, աշրջ գոցն քա-
նաս նէ՛ Հա՛յն ալ շախի մնայ... Ի՛նչ է ասոր պատճառը. — քու հայ
ու անգղայ ըլլալդ է...»

... «Ուրեմն դո՛ւք զձեզ պաշտպանեցէք, ո՞վ ստիպելք, դո՛ւք մեր
փրկութիւնը հոգացէք... Երբ մարդ այնպիսի երկրի մը մէջ կապրի, ուր
կեանքն ու ինչքը անպատեղով է, հարկ անհրաժեշտ է, որ կրէ իր վրա
ինչ որ իւր կենաց, քնչոց ու պատուոյ ապահովութեան համար պէտք
է»...

Իրաւացի էր Ալվազեան վարդապետը — Մասնանագրութեան ճամ-
բով չէր միայն, որ պիտի պատրաստուր «երկաթէ շերտի» սերունդը,
հայոց ինքնապաշտպանութեան և հայկական ազատամարտի սերուն-
դը...

Անշուշտ, Մասնանագրութիւնը դարձեալ մեծ բարիք մըն էր: Հայ

1930



ժողովուրդը Քուրթիոյ մէջ ձեռք կը բերէր իրաւունք՝ հիմնելու իր սեփական դպրոցներն ու այլ մշակութային հաստատութիւնները, իրաւունք՝ ազատօրէն վարելու իր կրթական-գաստիարակչական գործը։ Գարօցն է ազգային իմացական կառուցածքի հիմնասիւնը, դարօցն է մտաւոր վերածնութեան խոշորագոյն ազգակը։ Եւ Սահմանագրութիւնը ստանձնապէս զարկ տաւ դպրոցին։ Հիմնեցինք բնկերութիւններ, գումարեցինք դպրոցական ֆոնդեր, թափ աւառ մասնաւոր բարեգործութիւնը։ Թափ առան դպրոցի հետ և նիւթական ու իմացական քաղաքակրթութեան ուրիշ ճիւղեր՝ ճարտարապետութիւն, ազգային հիւանդանոցներ, գեղարւեստ, զրականութիւն, մամուլ, թատրոն... Ցառաջ եկան մտաւորականներու խիտ շարքեր, զարգացան հայ ազգային ինքնգիտակցութիւնը. որ նախերգանքն է ազատագրական շարժումի...)

Կը խանգալուէր, կը ցնծար պոստահայ մտաւորականութիւնը, որ կը լեցնէր Ազգային Ժողովի սրահը և որու աչքին Սահմանագրութիւնը համազարման մըն էր բոլոր ցաւերուն։ Այդ մտայնութեան հարազատ թարգմանն էր երիտասարդ Լըանտ Ասատուր, որ 1879ին—պատերազմի զարմատեանընկերէն, Վանի հրդեհէն, շէյխ Զէյալեղիներու հայաշինջ արշաւներէն յետոյ—հրապարակային ճառի մը մէջ կը յայտարարէր, թէ Ազգային Սահմանագրութիւնը «վերջ տաւ թշուա վիճակին» և թէ զայն «ծրագրող և զորձագրող վեճողի յեղափոխականներ Միապոյի բռններն կին... որոնք կը պաշտէին «երեք սիրականք ու լուսազոյ ջրերը... Ազատութիւն, Լաւասարութիւն և Եզրայրութիւն»...*)

Հայկական զաւար, բուն Հայաստանցի ժողովուրդը, ճգնաժամ բրտական խաֆրութեան և ընդհանուր անպահովութեան ալժմիճի տակ, սիրա լուծէր Պոլսեցի ազգայիններու պէս ցնծուլու Սահմանագրութեան ապիթով։ Անտեղ, զաւառի մէջ, ազգի մեծ զանգամը կը հալէր ու կը սպառէր տարէ տարի և Սահմանագրութեան բարբերները թոյլ սփոփանք լին միայն անոր ցաւերուն։ Գաւառը արդէն շափազանք թոյլ էր ներկայացած Ազգային Ժողովին մէջ։ Իրաւունք ունէր իրիմեան պատրիարքը, կըր կրէր. «Մեր Ազգային Սահմանագրութիւնը խմբագրել է մայրաքաղաքին մէջ և այն անձանց հեղինակութեամբ, որոնք տւելի եւրոպական կը ճանչնան, բան Հայաստանի վիճակը, պիտոյրք ու բարքը, որուն օրէնք սահմանելու կոչւած էր և այդ ժողովուրդը միայն Կոստոյրի մէջ չէր բնակեր, այլ այս անձուկ շրջանակէն անդին»։ Հայաստանի հեռաւոր գտանկերուն մէջ...

Քուրթը մէկ ձեռքով կը քաշուերէր հայ ղեկավար մտաւորականութիւնը, կուտար անոր օսմանեան մայրաքաղաքին մէջ տեսակ մը խորհրդարան և ազգային կառավարութիւն, համեմատաբար ազատ խօսք ու մամուլ, միւս ձեռքով քնաշինջ կ'ընէր աստիճանաբար դաւառական հայութիւնը — քրիստեանը և աղբուկ ու զիշատիչ պաշտօնէութեան ձեռքով — կ'աներէր բուն Հայաստանը, «կը լուծէր» այգպիսով Հայկական հարցը, եր իրիմեանի պատրիարքութեան օրեքն ի վեր (1870 թականէն) սպառնազին ցցեր էր թուրք պետութեան առջև և լզի էր արտաքին միջամտութեան նորանոր անակնկալներով...

Գզգոհութեան ու բողոքի կայծերը շմարեցան, ի հարկէ, հայութեան մէջ, բայց շատ ոչ արժարժեցին ու բռնկեցան... Այդտեղ է Սահմանագրութեան պատմական վրիպումը։

Նոյն կրթական, բարեգործական միութիւնները ժամանակին բստեղծէր լին նաև սարուկ Յունաստանի մէջ — Լիբերիաները — բայց անոնցմէ իւրաքանչիւրը օրբան մըն էր լեղափոխական քարոզչութեան, մարտազարտ մը՝ ըմբոստ սերունդ պատրաստելու...

Սահմանագրութեան սերունդը Հայոց մէջ զօրաւոր մղում տաւ մտաւոր վերածնութեան, բայց անտես առաւ այն ղէներբը, որոնցմով ազգ մը կը նստէր իր քաղաքական ազատութիւնը։ Նա գտաւ հայ ազգի փրկութիւնը միայն դպրոցի, եկեղեցու, վանքերու, մամուլի, թատրոնի, հանատրութեան, բնմբաստցութեան մարզերու մէջ, հեռուեցաւ մուսուլմաններու, Օտեաններու գերիառողջաւստ, օրինապաշտ հրահանգներուն և դրժեց անական ինքնապաշտպանութեան այն փրկարար պատգամները, որ կը հնչէին Վարազայ արժարեակ մենաստանէն։

Եւ եղաւ անխուսափելին։ Հայ քաղաքական խեղդիրը հրապարակ նետեցաւ 1878-ին, կըր հայութիւնը կը ղեզերէր մեղի, անդէն, կրատրական վիճակի մէջ, կըր տակախին նշուլը կըր սպասամբական շարժումներն, ստեղծը չկար յեղափոխական կուսակցութիւնը... ու հայ զատր արժանացաւ ընդհանուր անտարբերութեան։ Եւ այդ թականէն— լորդ Բրայսի հեղինակաւոր յայտարարութեամբ — սուլթան Լամիս հայկական խեղդիրը միանգամայն ընդմիջտ լուծելու համար, Բերլինի հայկական խեղդիրը միանգամայն ընդմիջտ լուծելու համար, արտաքին միջամտութիւններու յախտեանական սպառնալիքը բառնալու համար՝ յղացաւ մեծ շարքերու ծրագիրը...*)

*) Ա. Ասատուր. «Անճամադարութիւնը և Հայ Ժողովուրդը»։

*) Stm. Der Christliche Orient, 1897 p. №№ 11 և 12 (յօդան Ջէյու Բրայսի)։

Ուշ, այժ, տարաբախտարար, — բայց այնուամենայնիւ արձնցանք: Ըմբոսացումի ջարդը, մերթ թույլ ու երկչուտ, մերթ զօրաւոր ու յանգուիք, կը շարժակէր ճշնիկ թրքահայոց մամուլի ու գրականութեան մէջ: Անգամ Արեւնց — Շիշմանեանը, ճակատակ իր խիտ շափաւոր խառնուքին, լոյս բնծայեց շարք մը վեպեր, որոնք եկան Հարստացնելու մեր Հերոսական վիճակագրութիւնը: Քարոս Աստի, Քէօղարսու Ռըշտուի և Երկունճ գարկ կուսան հայ ուղղմական ինքնաճանաչութեան, կարծածոծեն պաշտօնի անհրաժեշտութիւնը, վերարտադրելով զեզարեւտական հովանու էջերու մէջ մեր պատմութեան զիջագնական դրագնները, ուր առանձնապէս փայլիր է ջեղի կենսական կորովը, անոր գործին ինքնատշաղկանութեան ճիւղը:

Ըմբոսացումի գանձը ճնշեց, վերջապէս, Եոյնիակ Պոլսոյ շափաւոր ու խճճական Ազգային ժողովի բնմէն: Բերլինի վեճաժողովէ յետոյ էր: Տագնապալի օրեր էին: Ըրրգ յօդածը սկսեալ էր արգելի դրսերով իր սին, անպաշտ, աղետաւոր բնույթը: Անպիտա — Դիգրայլիէի շարաշուք վարչակառուցեան տակ — բնու չէր հետաքրքրեր Հայաստանով ու հայկական բարենորոգումներով (1878 թ.) իր հովանիին տակ ասեր էր ժամանակն կայսրութիւնը (ընդդէմ Ռուսիոյ) հետաւոր յարձակումներուն: Անտարբեր էր և Ռուսաստանը, անտարբեր էր ողջ Եւրոպան: Ու սուլթանն ջամբոտ, քաջալուրած այդ բնօճանոր անտարբերութենէն, մոռացութեան գամբիւղը նետեր էր Ըրրգ յօդածը. և երբ — 1879 թ. Յունարին — օր մը Հայոց նառն ժողովի պատգամաւորութիւնը գնաց Բ. Դուռը «չարանուն հարստահարութիւննու մասին անդեկայցիք որ զանգատ բառնալու», Համիտեան ստորագամը պազը, թշնամական խօսքերով զինուորեց զայն և ճամբու դրաւ, բանլով, թէ «Սիսիական Քուրճիայով զրաղելու ժամանակ յոյն»...

Խորունկ յուսարում ծայր կուտար բոլոր հայ շրջաններու մէջ և 1879 թ Մայիս 11ին Ազգային ժողովի նախագահը, Մատթէոս Եղմիրճեան, կարաստաներ արգելն իր գործարականը Ըրրգ յօդածին վրայ. — «Գիտեմ, որ ամէն երեսփոխան անճամբիր պիտի ուղէ տեղեկանալ, թէ ի՞նչ են Հայաստանի բարեկարգութեան համար կատարութեան ձևեր առած միջոցները... Համբերեցէ՛ր տեսրը երեսփոխանը, թի՛շ մ'ալ... Այս համբերութեան խրատը կուտար մեր բոլոր գաւառական վարչութեանց, որք նորանոր Հարստահարութեանց անգեկապիներով ճեղգնեալ կողողեն Պատրիարքարանը և Պերլինի զաշագրին Ըրրգ յօդածին գործադրութեան ժամանակը կը հարցնեն... Գիտեմ, պիտի բսէր,

թէ համբերութիւնն ալ շափ ու սաճման ունի: Սակայն մեր յուր կտրած չենք մեր վեճափառ Սուլթանէն... և Պերլինի զաշագրին ստորագրող կատարութիւններէն:

Երբ Ստորագամի վերը յիշատակած պատասխանը հաղորդեցաւ Ազգային ժողովին, Ստեփան Փալպազեան — թրքահայ մատարականութեան ամենէն զգայուն և բմբոստ ներկայացուցիչներէն — խորապէս յուզած, ամբիոն բարձրացաւ և արտասանեց ցնցող harangue մը.

— Կատարկեն, թէ Բ. Դուռը եւրոպական Տաճկաստանի գործերով պաշարած է և չունի ժամանակ Հայաստանի վրա դարձնելու ուշադրութիւն: Այժ, չունի ժամանակ Հայաստանի վրա իր ոչնչը գարձնելու, վասն զի եւրոպական Տաճկաստանի մէջ ապտամբ և դիմեալ ժողովուրդներ կան, փոթորիկ կայ, մինչդեռ սպիին, Հայաստանի մէջ, անմեղ ու անզէն ժողովուրդը մը կայ... սպառազէն հրսաներուն մատանած, որ եր սպանեն, կը բանգեն, կը յափշտակեն և կը մնան ազատ ու անպարտ, շնորհիւ անպիտան պաշտանակալաց... Ի՞նչ դժարութիւն կայ, որ զէթ զէնը չեն տար հայ ժողովուրդին, որ զինքը պաշտպանէ... Եւրոպական Տաճկաստանը ապտամբութեան դիմելով, կրցաւ կորզել այդ իրաւունք, իսկ Ասիոյ հայ ժողովուրդը, վասն զի ազիբական կերպով կը խրնդրէ, անոր կը զլացի ամէն հաստարութեան իրաւունք...

Ապտամբութեան համարձակ կոչ մըն էր Ազգային ժողովի բնմէն... Ստեփան Փափազեան, Ենթէս Վարժապետեան. Մկրտիչ Փորթուզալեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Եղիշէ վ. Ալվաղեան, Միխայ Զեբազ, Արփիար Արփիարեան և այլն — նոր, վառլուռ սերունդն էր, պատուութեան պատգամարեր Երիտասարդ Հայաստանէն: Բայց «ճին դուստներէն» եւս շատեր նոյն հոգեկան վիճակը կը մատենէին և նոյնքան սեւեռեան էին հայ ժողովուրդի կացութեան հանգեւլ թրքական տիրապետութեան տակ: Սեւեռաներ կային անգամ հայ մէլայուներու շարքերում, որոնք ուս-թուրք պատերազմի ընթացքին, Քուրքքիլ անդրանիկ կորհրդարանին բնմէն ի յուր աշխարհի կը պանծացնէին սամանեան րէժիմը, մերձելով որսական հովանին և խարանելով որս «Տայակոպ» տիրապետութիւնը:

Պոլսոյ «Մասիսի» մէջ (1877 թ. Յունիս 19) արձանագրած է օսմանեան պարզանենտի ամէնէն հետաքրքրական նիստերէն մէկը, ուր կարեղն երեսփոխան Համազասպ էֆ. Պալլարեան խօսած է քրակեան խնդրի մասին: Եւ այդտեղ հայազգի մէլայուր չէ վարանած մատը զնկու հիմնական խոցին վրայ — այն աճաւոր raisou d'Etat, որ կը ծանրանար հայութեան ճակատագրին վրայ և որուն զօրութեամբ հայ ժողովուրդը կը տապկէր, կ'ողակկուէր իր գաղաւթ չարներին մէջ, սաանց

գրկութեան ունի յոյշի... Համազասպ Պալլարեան կը պատմէր իր ճանապարհները, թէ ինչպէս աշխրհագիտական կը ծնարկէր իր ճանապարհները և վաղեմեանը ու ժողովուրդին հետքեր կը գործակցէր շրջապատին...

«Շեր կը հարցնէի կուսակազմներուն, թէ ինչ՞նչ բերուածք չեն պատմեր, որոշ համար երկու վաշտ զորք բաւական է, և այսպէս տեսականութեամբ թոյլ կը տրի որ շարունակեն իրենց շարագործութիւնները, ինչ կը պատասխանէին, թէ այս գործին մէջ չեն վերջի կրթութիւնը կայ (պետական զաւանթեր)։ Վերջին խելանուն եղայ, թէ ի՞նչ է եղեր այդ պետական զաւանթեր բաժանին. այդ չհիմքեր սա է եղեր, թէ կառավարութիւնն անոր համար այդ վիճակին մէջ կը պահէ եղեր Ֆիլիտերը, որ եթէ Հայերը Հայաստանի մէջ պատմարկան շարժում ճրնեն, Ֆիլիտերը գտնուող զսպան, և մէկ ճաւ, որ Ֆիլիտերը, կը պատերազմ բացէր Ռուսիոյ դէմ, օսմանեան բանակին իբրև կամաւոր զորք օգնութիւն պիտի ընեն եղեր»...

Ասանց Համազասպ էֆէնտիի այդ պատմական յայտարարութեան ալ շատերու համար զաւանթեր չէր, անշուշտ, այդ անհիմապարտ հիմքեր հիմքիւմը, որ կը խեղդէր հայ ցեղի մեծամասնութիւնը իր սոցալպատէ միջոցներուն մէջ և որու հանգեպ հայ բազմաասան ժողովուրդը, յանձնին իր խորհող ո գրագող տարրերու, յանձնին իր սրտացու, զաղափարական հարբամասնութեան, մէկ կը միայն կը եշմարէր — ազատութիւն:

Վարանուրը այլևս ոճիւր կը մեր յառաջագահ մտաւորականութեան աշխիւ Միմիայն Ֆիզիքական տառապանքները չէին, միմիայն տնտեսական և քաղաքական մշտութիւնը չէր, միմիայն աղապակող անապատութիւնն ու զանգամներու թշուառութիւնը չէր, որ զատուով կը համակեր հայ զգաւոր ու աշխարհ տարրերը, այլ և այն պարզ, մարտկոց դիմապատմութիւնը՝ թէ չի, քաղաքակիրթ ազգ մը — որ զեռ տասնհինգ դար անց տած է մարդսինար ժողովուրդը, որ արևստի զեղեցիկ կոթողներ, որ նորագոյն ժամանակներում տակը է լիզուն մը բանաստեղծներու, վիպասաններու, գիտնականներու, բժիշկներու, նկարչներու, պետական գործիչներու, զօրավարներ, և որ այժմ ալ կը հանդիսանար, հելլեն տարրին հետ մուրք կարչորութեան զեղեցիկ անապատութիւնը ու յառաջադէմ ոյր իր որակաւորութեամբ, մշակութիւնը, իր ճողագործ, արդիւնաւորութիւն և առևտրական ընդունակութիւններով — անթակարգ է կիսափայլէի ցեղերու այլասերող տիրապետութեան, կը մաշի ու կը սպաննայ անոնց իրար կրօնակներուն տակ, որտեսաւարած, անարգութեամբ, մարդկային ամէն արժանապատութիւն կորսնցուցած:

Եթէ անգամ չիներ Հարսաստանութիւններու, տնտեսական հրէշտար կիզերումներու զուլումը և հայութեան մարմինը կրծող բուր միւս շարժերը — միմիայն այդ խաթոց գիտակցութիւնը բաւ էր արդէն բարստացումի հրահր արժարծելու...

Մէկ կը, որքան, — ապաստարարութիւն...

Եւ այդ բառը — նոյնքան վստ, կասարգիչ, որքան և աճողեցիկ — կը հուովէր թրքահայ մտաւորականութեան զաւանթ ժամագործարկողութեան մէջ. եւ զարմա ազատաստենչ երիտասարդութեան կարգախօսը այն պէս ընդ օրերին ի վեր. հազար ու մէկ եղանակներով կրեցան Հայոց ազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցան մայազատութեան երգը...

Իհեռու եղովույրը, որքան, զեռ բաւականաչափ չէր յառաջացեր,

հայկական իրականութիւնը բաւականաչափ չէր հասունցեր, պէտք էին նոր հարահանր — և աններ այլ շուշուր:

Կարողութեամբ պատերազմէն շատը աւելի եւս վատթարացաւ: Ոչ միայն Երկր յօդածի հետ կապած յոյսերն ի գերելու ելան, ոչ միայն սոցալականութիւնն ու հայ զօրավարներու յաղթական մուտքը երջում ու ճողութեամբ ցնձութիւնը տեղի տին տխուր նահանջի ու ընդհանուր յուսատրուրի, այլ և հայութեան աշխրհական անոնց պարտաւնաս տեսանքն ու սարսափներու յանձնաւար տեսարան մը, որու նմանը Քուրբանը Հայաստանը չէր տեսած գարեհրէ ի վեր:

Թրքահայութիւնը պատերազմի ընթացքին ծայրագոյն հաստատութեամբ կատարել էր իր պարտը հանգեպ օսմանեան պետութեան. 20—30,000 հայ մարդիկ կոտորուցան ատեն յճեր էին իբրև եշմարիտ գրաստներ՝ թշուառներն ու ուղղամիթերը հետու վայրեր փոխադրելու համար, հայ և առհասարակ ամենածանր աշխատանքներ կատարելու համար, հայ և առհասարակ ամենածանր աշխատանքներ աշխատանքներ կատարելու համար, հայ և առհասարակ ամենածանր աշխատանքներ աշխատանքներ կատարելու համար, հայ և առհասարակ ամենածանր աշխատանքներ աշխատանքներ կատարելու համար, հայ և առհասարակ ամենածանր աշխատանքներ աշխատանքներ կատարելու համար...

պղծած վանքեր ու եկեղեցիներ, անխիստութիւն, ա՛ն ու սարսափ-
խուճապ ու զայր... Անորդ գաւառներ գաւառացիքն ու զանգաձայնի
գրե՛մ զկայի առասկան սահմանը, որ ստանեակ հաջարարը զազթա-
կաններուն կը սպասէր անխուսափելի սովի ու համաճարակ հիւանդու-
թիւններու պատուհար:

«Է՛մ բոյլ գրիչը անկարող է նկարագրել այն բոլոր սարսափներ,
որ նիրքցին Հայաստանի մէջ Փրութե՛ն ու օսմանեան բանակի այլ
կամաւոր վաշտեր» — կը գրէր 1877ին անգլիական Քայմզի թղթակիցը,
Նորման, որ ուղեկցած է թուրք բանակին Հայոց լեռնազաշտի վրա և
այսպէս հրատարակած է իր հետաքրքրակա՛ն թղթակցութիւնները խոշոր
Տատրոզ մը Armenia and the campaign of 1877» խորագրով: Հայ
թղթակիցները, հայ մամուլն ու զրահանութիւնը, Բաֆֆիններն ու Ար-
ժրուտիները կարող էին շահագանցել այդ օրերուն կատարած թիւրտե-
րու և բաշխողութիւններու վայրագութիւնները. բայց հազիւ թէ այդպէս
վարէր պահանջողական Քայմզի ներկայացուցիչը. — այն Քայմզի, որ
ազդեցիկ օրգանն էր լորտ Բիկընսֆիլդի թրջատէր կառավարութեան:
The subject is too painful to need any coloring (նիւթը շահագանցեց
ճանք է և պէտք չունի քրտատրուի) — կրե՛մ Նորման, և կը շարունակէ-

— Այն ճիւղներու ձեռքով կատարած արձակիքներու պարզ ար-
ձանագրուն իսկ բաւ է յարուցանելու անոնց դէժ արժանաբար պատիժ:
Կը բաւ բան, որ Բայազէտը հիմնապէս կողոպտուր է և սուլի քան
1100 բնակիչներ կատարել է նոր, կը ներկայացնէ այսօր անբակոյտ
ը... Գազախութիւններու թատերալագրերն են Վանի, Բիթլիսի, Ալաշկերտի
մըլլանները: Ամենօրեք լքած զիրդեր, պարպած, ամայացած քաղա-
քներ, անկուտրը զազրած, չունե՛րք որ պապն Շեճուրեհուն, այլքի՛ որ
կը պան իրենց անարգած կիները, ծեղձեր՝ որ կողքան իրենց խոզ-
խուզած զաւակները... Ալաշկերտի գաշտին մէջ 122 հայ զիւղերէն 113ը
կատարելապէս ամայացնը են և ան քի գործաթիլ քրտանահանները, որ լին
կարողացած օգուլի առասկան Նովանատրութիւնն, քարաքոսարար
կտորներն են... Ամայի է Բիթլիսը... Մտինս 4ին թիւտ կամատրները ի-
րենց ցեղապետ Իսմայիլի հրամանով զրմեցին զկայի Վանու Ճամբուն
վրա—Յայան, շարդ ու աներան: Ազուլի զիւղին մէջ հրդեհեցին եկե-
ղեցին, որ սպաստանած էին կանայք ու երեխաներ, այսպէս բնարարե-
ցին բոլորը ու թողին մերկ: Նոյն վիճակին ենթարկեցան Շահարաբի
(?) հայ բնակչութիւնը... Շէյխ Ջելալեղդին կը ճարակէր ամբողջ տարա-
ձութեան վրա, Վանէն մինչև Յէրիք փաշայի բանակը՝ կը նետուր իր հրո-
սակներով հայ զիւղերու վրա, կը զափշտակէր բոլոր կոյսերն ու մա-
նուկները, կը կողոպտէր և կը պղծէր եկեղեցիները: Ս. Բարթուղմէտս

վանքը ենթարկեցաւ Ալի խանի ձիւտորներու յարձակման. շրջակայ զիւ-
ղերէն հոգ ապաստանէր էին կանայք և երեխաներ. ամենէն ցանկալի-
ները տարան իրենց հետ և բահանան, որ փորձեց պաշտպանել իր աշ-
էրիք, սեղն ու տեղը ապանեցաւ... Շէյխ Իսաղուլլահի մարդիկ կը մըր-
ցէին Ջելալեղդինի զրօշին տակ գործող իրենց ընկերներուն հետ... Մու-
շի շրջակայքում թիւտ Մուսա պէլը փորքաթիւ ձիւտորներով կուրէր
և կը հրդեհէր հայ զիւղերը: Խորքի մէջ այդ ձիւտորները կը մտնէն հայ
քահանային տունը, որ նոր թերթ էր իր հարսնացուն հայրապետի տունը:
Չարագործները պարտե՛մ կը կանգնէ մէկտեղ ծեր քահանան ու իր զա-
ւակը և անոնց աշէրուն առջեւ կը բռնարարեն աղջիկը: Ապա կը հրա-
մայնն սրէ անցրել երէքն ալ... Այլ նա շնմ կարող գրէր...

«Եւ գործած — այս բոլորը չէր: Աւելի զգարձորեցին կար: Էմիլ Գի-
լօն, հռչակաւոր անգլիացի թղթակիցը, որ մը կը գրէր, Մասնոյ կոտո-
րածի առթիւ (1894թ.), որ շարգորը Վերկիքի ողորմութիւնն են», համե-
մաբա՛ն Հայերու առօրեայ զոխխային կացութեան հետ: Ճշմարտութեան
բաժիրը կայ այդ տարօրինակ յայտարարութեան մէջ:

Saurfem ճիւղաւոր սխտե՛մը կար, որ կը ծանրանար հայ ժողո-
վորդի անանապան կիսերէն վրայ և տարուի պէս կը ծծէր անոր ա-
մէնէն կենսական հիւթերը: Պատերազմէն յետոյ, ստորեքը բազմա-
պատկեցան: Պատերազմը ուժասպառ բրեր էր թուրք կայսրութիւնը և
զիրարը շակելու համար գերագոյն միջոցն էր՝ ոյժ տալ կեղծքանան ու
հարստահարութեան մեքենային: Քաւտերան նոխալը միշտ աշխատա-
ւոր զիւղացիութիւնն էր և մանաւանդ հին, հաւատարիմ կիսն կողմ — հայ
շինական և քաղաքային ժողովուրդը... «Եւ այդ՛ այն օրերուն, երբ տնտե-
սական կեանքը մարի էր Հայաստանի մէջ, երբ կործանէր կը՛ հայ շի-
նականը, կ՛ հայ անտարական դատակարար: Իսկ 1880ին պայթեցաւ նաև
սովի արձակիքը. համիտեան կառավարութիւնը — միշտ նպաստակ
զարմուցած Հայաստանի պարպու՛ն ու Հայերու բնաջնջումը — մէկէն ի
մէկ կաշկանդեց մթերներու ապու փոխանակութիւնը, արքիւցի հա-
ցաճատիկներու արտահանումը քան վարդերէն, որ անոք համեմատա-
բար առատ էին: Ալաշկերտէն ծայր տալով, սովը տարածեցաւ Շահրզ-
հետէ, համաճարակ հիւանդութիւններու հետ և շուտով հսկայ բառաշին
մը աղիկուտը ելնէլներով բարձրացաւ Քրքահայաստանէն ու նոր սովա-
հար բազմութիւններու կարասիք զիմեց զկայի զո՛վկաւ:

Արդէն իսկ պատերազմէն առաջ շահագանցեց ճանք էր օրինաւոր և
ապօրինի տուրքերու բնուր, զոր կը կրէր իր վտիտ թեւերուն վրայ հայ
աշխատատար ժողովուրդը, թուրք-քրտական կրկնակի լուծին տակ: Ար-
զէն իսկ անասնի շարիք մըն էր միջնազարեան խափրարքներ, առ-

տական Տարխատութեան այդ այլանդակ մնացորդը, որու գործութեամբ քիւրտ ազան բաժին ունէր իր հպատակ հայ շինականի բոլոր այլազան բերքերէն — Տացահատիկներէն, ոչխարէն ու բուրդէն, մեղրէն ու կարագէն, ձեռագործ արգիւնքներէն և տարբ կ'առնէր կամ գրամով, կամ թէ բնական բերքերով:

Ետև է գրեթե թրքական Տարխատութեան սխտեմի մասին, որ իր անասման կամայականութեամբ, անշուշտ, եզակի է կազմակերպւած պետութիւններու շարքին և շատ անգամ օտար հետազոտողներ գարմանք յայտնել են հայ ժողովուրդի համբերութեան սովոր: Անգլիական կապույտ Գրքերն ալ յիշատակութիւններ կ'ընեն այդ մասին, 1830 թ. սեպտեմբեր 23 ին բրիտանական հիւպատոս էվլեստ կը գրէր էրզրումէն կոմս Գրէնվիլին.

— «Միմիայն ժողովուրդի (հայ ժողովուրդի. Մ. Վ.) համբերութեամբ, երկչտութեամբ և անոր զանազան խաւերու մէջ եղած կապերու թաւութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը՝ որ արևելեան սանջակները անցեալ տարի տարբերը բաշխելու միջոցին շապտաամբիցան կատաղարութեան դէմ, ոտքի կանգնելով մէկ մարդու պէս»:

Հարստահարութեան, ճնշումի ու տառապանքի ոչ մի ձև չիմարեցաւ այդ վատարախտ ժողովուրդին: Պատերազմի արձախրքներ, հզորներու սպառ, անզուժ անտարբերութիւն, անտեսական անբար, սով ու ճաղթականութիւն, խմբովին բանտարկութիւններ, կանանց առանձնով, զանգաձանի բնաշնչումի գիւական ծրագիրներ, տարբերու յարաճուն բռն և բրդական անհասնում բռնութիւններ, որոնք յանգեցան Մուսաբէլի աշխարհագրորդ գազանութիւններուն — բոլորը, բոլորը եկան հիմն ի վեր կործանելու, տակն ու վրա բնելու դարաւոր հողբրանութիւն մը, որ նիթեւ չէր արևելեան ճակատագրապաշտ անշարժութենէ և գեանտարած հնազանգութենէ...

Ապստամբութիւն — անլի ճիշտ՝ դաւադրական գործունէութիւնը — մայր առաւ վերջ ի վերջոյ, կըր գանակը ուկորին հասեր էր...

«Քա յնան, դարերու անխօս, անմոռն ստրուկը խրտայ վերջապէս և ուղեց ցոյց սալ աշխարհը, որ ինքն ալ անարդ գրաստ մը չէ, այլ մարդ-էակ մը, — ստուր մը չէ, այլ գոյութիւն... «Je m'insurge donc je suis!» (կապտամբի՛մ, ուրեմն կա՛մ). անգամ մը ևս արդարացաւ հին, դաման ճշմարտութիւնը, որ անմահացած է աշխարհի մեծագոյն բանաստեղծներէն մէկուն — Երկրի — այս հրեղէն բառերով.

«Երբ որ ճնշւածն այստեղ, աշխարհում
Դատ ու իրաւունք բնա չի գտնում,

Երբ որ բռնութեան լուր գառչելի
Դառնում է սարկին անհանգուժելի,
Նա իր ձեռները երկին է մեկնում
Եւ վառախօրէն այնտեղից խլում
Իւ իրաւունքներն յախտեանակեան,
Որո՞ք էրկին տաղբերի նման
Անշարժ, անվախեան անհունին փառած
Մնում են այնտեղ յարտեան կոխած:

Երբ էլ ճար չունինք, սուրին ենք դիմում,
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում,
Ընդդէմ մեզ ճնշող անարգ բռնութեան
Պաշտպանում ենք մեր կին ու երեխան»:

Յեղափոխական գաղափարի ամենէն առատ ցանքը կատարելը էր Վանի մէջ, որ կ'ապրէր Խրիմեան (Վարազայ վանքը), որ հաստատւած էր և Մկրտիչ Փորթալական իր համբաւար Վարժապետանցով: Փորթուզական նախապէս ունեցեր էր արդէն կրթական-յեղափոխական բարոզութեան շրջան մը — դեռ շՅական թերու սկիզբներուն — որպէս անուցիչ: Թոգասի մէջ, որ կը պատրաստէր նոր, գաղափարական երիտասարդութիւն, կոխ էր մղէր ազայականութեան ու բռնութեան դէմ և այդ պատճառով շղթայակապ բանտարկեցաւ Թոգասի մէջ, արտուցեցաւ Սերաստիտ, ապա վերադառնալով իր ծննդավայրը, Պոլիս, հրատարակեց որոշ ժամանակ Ասիա անունով ազատաշունջ թերթ մը, որ երկար չկրցաւ ապրիլ:

Այդ մարդը, որուն վիճակւած էր յետագային հիմնել տառլին հայ յեղափոխական կուսակցութիւնը և դառնալ առճգիրայ հայկական շարժման, իր շրտակ ու անվախ բնատարբութեամբ և տարբ, յեղափոխական խտնածորով, շափազեց արժատական կ'երեւէր իր հայ շրջապատին, որը շարժական կը դառէր անոր դէմ, կանց շտնելով անգամ մատնութեան առջև: Բայց երիտասարդ տառքեալը ունէր նաեւ իր բազմաթիւ հիացողները: Մէկը հազագիտա պոլսեցիներէն՝ Նա համաձայնեցաւ եր-

*) Չներ յիշատակեր Չլչունն ու Աստուր, որոնք երկու օգուսիս էին ստորկութեան անպատրիմ մէջ, մասնաձեւ Չլչունը, որ վաղուց ծածօք էր իր պարթական ընդդումներով և նոյն իսկ 1872ին վերստին յուցեց բոլոր կատաղարական շրջանները անվանակալ իւրտաններով, Յարութիւն Չարխանի և այլն դէմալարութեամբ. Չներ մոռնար նաև 1872ին վանի մէջ հիմնած «Միութիւն և Փրկութիւն» գաղտնի խմբակը:

Յայ Հայաստան, որպէս գործակալ Պոլսոյ նորակազմ Արարական Ընկերութեան:

Գնաց Վան 1877ին, շրջագայնց, ուսումնասիրեց, պատրաստեց զե-
տինը կրթական հաստատութիւններ հիմնելու համար: Ռուս-թրքական
պատերազմի ընթացքին զնաց կոպկաս, մտակցալ Գրիգոր Արծրունիին,
մնաց երկուք ամիսներ անոր ետուէ աշխատանքոցին մէջ, յօգուածներ
տաւ «Մշակիչն, Արծրունիի Բնագորութեամբ ներկայացաւ կովկասեան
բարձր իշխանութեան և արտօնութիւն ստացաւ հանգանակութիւն մը կա-
տարին, ուսումնալոց մէջ ի նպատակ Արարական Ընկերութեան: Ապա,
բաշարեալ «Մշակիչի խմբագրութեան հեղինակաւոր արշակցութեամբ,
վերագրեալս Վան և հիմնեց սպեռնը 1878ին իր Վարձակաւանոցը, որ
պիտի գտնուր տեսակ մը կեդրոնական վարձարան Հայաստանի վերա-
նորոշեան համար: Սակայն այդտեղ նա շուտով ծայր տին շշուկներն
ու զազատութիւնները կրեական-պահպանողական հայ շրջապատէն, լուր
տարածեցին, թէ ետրի առաքեալ «ժշակութիւնով վարագործին տակ
յնգափոխական զազափարներ կը սերմանէր Վասպուրականի երիտա-
տարդութեան մէջ... Ինչ որ միշտ էր, անտարակոյս... Վարձակաւանոցը
աղաւտալով զազափարներու մարզարան մըն էր յունական հեթեթի-
նորու օրինակով: «Փորթուզական ազատութեան շուն: մը փչեց ամբողջ
Վանի վրայ — կը գրէր Արփիար. առանց Յեղափոխութիւն բարձր ար-
տասանելու, պատրաստեց յեղափոխական սերունդը»):

Եւ քանի մը տարի ապրել չեալով, զպրտքը փակեցաւ կառավարու-
թեան հրամանով: Ինք Փորթուզական — ինչպէս որ մը կը պատմէր
մեզի — միանգամայն համոզուած էր, որ այդ համակերպի ձեռնարկի իս-
պիտեամբ հայ զաւարթութեան արդիւնք մըն էր: Բայց և միւս կողմէ հա-
տեանակն է, որ ինքն այ մեծապէս նպաստեց է հակառակորդներու դա-
ւերուն, իր շարժական ազատ կեցածքով և ծայրայեղ բարոյութիւննե-
րով... Երբահայեցութիւնն ու իտհականութիւնը, աւա՛ղ, հայ զործիչ
տաղանակարգ առաքիներութիւններէն չեն... Վասպուրականի սրտին մէջ
ազատութեան շնորհը կը հնչեցնէին տանիքներու վրայէն... Ունինք
ձեռքի տակ պարզ, անպատճառ պատմութիւն Փառնո Քելլիմուզեանի —
եղչն հինաւորց սերունդէն և Վարձակաւանոցի սաներէն — որ, ինչպէս
ամէն հայ, խոր լարզանք ու պաշտամունք ունի Փորթուզականի և երի-
մեանի համար, բայց և շատ բարձր չի գնահատեր անոց տական ու
շրջահայեցութիւնը: Յր մը հայ անւանի նկարիչը մեր խեղճանքով Թե-
լաղրեց մեզի իր լուչերը Վասպուրականի այդ առաջին յեղափոխական

սերունդի մասին, անոր վարիչներու, խոշոր ղեմերու, մասնաբաժանե-
րու և հալոյններու, որոնք եղան ազատագրական շարժման կարագնա-
նիք (80ական թեւրու սկիզբներէ) Քրթահայաստանի ամենէն հայաշատ
և զուցէ նաև ամենէն բարեկեցիկ գաւառին մէջ: Այդ սերունդէն կաւ նը-
շանաւոր Կեօրիսեանը (Մկրտիչ Քելլեմուզեան), որ իբրև Արմենական
Կուսակցութեան պարագլուխ, երկար տարիներ գործակցեցաւ մեր Պե-
տոյնի, այդ սերունդէն կաւ յեղափոխական զազափարի բազմաթիւ այլ
բարոյիչներ, որոնք գործեցին Վասպուրականի շրջաններում և շատերը
զացին դէպի բանտ ու կախաղան, գրկեցին Անտիոսեանի պէս մարտիրո-
սութեան փառապալակը: Սւ եղչն այդ սերունդէն հրապարակ կան առա-
նակաշտպանութեան զորջը, որոնք լեռներուն հայակներով, պարզեցին ինք-
նազավտականութեան զորջը, հարածելով քրտական հրոսակներն ու կա-
ռավարական պաշտօնեաները ակն ընդ ականի օրչնորդ:

Քողզներ որ խօսի Փանոս Քելլեմուզեանը այդ պատմական շրջանի
դէպքերու և դէմքերու մասին.

— «Հայերս անտաղտ էինք մեր հայրենասիրական ցոյցերու մէջ,
որոնք, ի հարկէ, չլին վրիպեր կուսակալի ուշադրութեանէն: Հայրիկն ան-
գամ, որ Վարագի վանահայրն էր, կարծես թէ կը բաշարէր այդ ցոյ-
ցերը...», Ազգային Սահմանագրութեան տօնակատարութիւնները շատ
վրան-բայ էին... Տաք հազար մարդով կերթայինք, Վարագ, ազգային
զորակներ պարզած, հայրենասիրական երգեր երգելով... Փորթուզա-
կանն այ շահչլութիւններ կըրէր: Բնութիւններու ժամանակ, կուսակա-
լի ներկայութեան, աշակերտները Գամառ-Քաթիպայի թուրքառեաց
ոտանաւորները կարտասանէինե...»

Կեդրոնական վարձարան ի վերջոյ փակեցաւ, բայց իր կարճա-
տեւ զոյութեամբ իսկ ընդմեաւոր եղաւ: Աշակերտները ցրեցան զէպի
Մուշ, Խնուս, Բաղէշ, Պարսկաստան, ուսուցչական և բարոյչական ա-
ռաքիչութեամբ: Անոցմէն էր կերպասեանը, որ 1889ին կազմաւ ու
նահասակեցաւ Գօլօջանի հետ: Բայց Փորթուզականի աշակերտներէն
մեծագոյնը Անտիոսեանն էր, որ դեռ ընդամենը 20 տարեկան՝ բացաւ
Վանի մէջ կիրակներօրէն զպրտք, որ կը նպաստէր երիտազատութիւնը և

* Օջալկներ կային Ռուսիոյ ժողովուրդ միջամտութիւններու մասին: Երողութիւն է
որ մեծ իշխան Սիխայի Լիվուպայի (կովկասեան փոխաբան.), որ կը վարէր Հայոց
Տակաւապիցի ցար Ալեքսանտր Բ-ի անձնով, արմատաբար կը ճարտարապետ յոր-
բախմէջ շարժուէր և ճոյն իսկ Վանի ուսումնական հիւպատոս Աշունկեան — առաջին
անգամ — իսկ մարդ մը, կուսակալին նամակաբան, որ ինչպէս ժամանակն ան-
ձամբ կը սրտմէր մեզի, կենդանի շփման մէջ եղիւ է իրիմեանի ու այլ ազնեցիկ
հայ գործիչներու հետ:

*) Նոր Կենք, Յուլիս 1899 թ.

Ստեղծող Միութեան նախաձեռնողները չմտցան, ի հարկէ, և շեշակը, կովկասը կը գտնէր այդ կուսակցութեան սիւներէն մէկը, հանգուցալ Ռուրլէն Խանազատ, որ զեա 1889 թուականին բուն պրոպագանդաղ էր մղէր Կովկասի հայութեան մէջ, ձգտելով ընկերվարական դարձնել երեսուսարգութիւնը և գրաւել զայն «Շեշակ»ի կողմը: Երբ կը սկսուին թիֆլիզի խորհրդակցութիւնները զոյութիւն ունեցող այլազան խումբերու միջեւ, մեր ընկերներուն միւն, Արշակ Տէր Գրիգորեան, կերթալ Բաթում, ուր կը գտնէր նանազատ, և թիֆլիզի խումբերու կողմէն կը խրեթում, անստեղծի ստեղծի խորհրդակցական ժողովներուն: Այսպէս կը զրկէ «Հայրենիք» ամսագրի իր յուշերուն մէջ**, ինքն իսկ Ռուրլէն Խանազատը: Երկու շարժք յետոյ, նա թիֆլիզ կերթալ — լիազօրած, անշուշտ, իր կուսակցութեան կեդրոնէն — և նախ երկարօրէն կը տեսակցի Քր. Միքայէլեանի ու Ջաւաերեանի հետ:

Ու անմիջապէս հարց կը զնէ «Գաշնակցութեան» երկու ոահվիրաներուն — կընդունի՞ն արեօք թիֆլիզեան խումբերը ընկերվարական ծրագիրը, կարելի՞ է արեօք միացնել զանոնք այդպիսի ծրագրի մը շուրջ...»

Մայիսիցմի նորընծաներու ամենէն այրող մտահոգութիւնն էր այդ... Թերեւ համոզած «սոցիալիստ-մարքսիստներ» էին Քուրքիոյ մէջ գործող իրենց կուսակցի Ճահնկիւնեան, Տամատեան, Գոթոք և ուրիշ մտաւորականներ... Անհամակրելի ժեսմ մըն էր հեշակեան պատկերակի այդ հարցոյնը — թեկաւորած, անշուշտ, ժրնակի կեդրոնէն***) և որ կար-

*) Թէև նորակազմ «Գաշնակցութեան» գաղափարաբանութիւնը սկիզբ չունէր որչ զնաւ արմատական ուղիործին մը և պատրաստ էր ընդունելու իր շարքերուն մէջ տարբեր աշխարհայեացք տէր մարդիկ յանուն ընդհանուր դատի և պայքարի յաշողութեան: Ցալուն է նաև, որ Արծրունին իր ժողովրդակամութեան գագաթնակետին մասա շնորհիւ իսկ դաշնակցական պարագլխներուն — Բրիտասփոր, Ջասարեան և այլն — որոնք կազմակերպեցին անոր շքեղ յրեկանակաւ հանդէպ 1890ի սմաղը (զարկաւ գործունեութեան 25ամակը):

** 1927 հիկունքեր:
***) Ինքը նամակատ կը գրէ Լայրենիքի նոյն թիւն մէջ (1927 դեկտեմբեր). «Տրայագումուն և Պոլսուն ունեցաւ գործունեութիւնը իմ պարզ կերպով ցոյց էր տուել, որ մարքսիստական գործունեութեան համար այդ երկրուն ոչ մի ուղ չկար: Թուրքիայի միջակայրուն մարքսիստ անկող չունէր»:

*) Տես Լայրենիք անա. դեկտ. 1927:

*) Երբ Արծրունի բոլորովին շտ քաշեցաւ, Մալումեան ևս դարձեցող իր մասնակցութիւնը հայկական շարժման մէջ, որպէսպի 1890ից վերստին նետի մեր շարքերուն մէջ և գործէ անոյլ նախաճով, մինչև հարց պատմութեան զարեւորանքի թակաւը, երբ նա իր ընկերներուն հետ գրից նամատակութեան խաշը:

ձեր սկիզբէն կուզէր բռնի թիֆլիզցիներուն. «սենք պիտի միանանք»: Բնականաբար, այդ խիստ շնորհաւոր շարքումը շփոթութիւն չարդց թիֆլիզեան շրջաններում: Մեր մեծ ընկերները կը կարորէն և բազմաթիւ վիճաբանեցան հանապազօրէն հետ այդ կենտոն խնդրին շուրջ: Եւ պէտք եկա Քրիստափորի հմուտ stratagemer, հակառակորդը զինաթափ ընելու և պէթ անոր առձամեայ ու ձեռական համակերպումը վատկելու համար:

Ընկերվարութիւնը մարզկային ցեղի ամենէն վաճճ վարդապետութիւնն է, որ նպատակ ունի ազատագրելու աշխատար և ստանալող զանգամները ամէն տեսակ լուծելով — բազմաբան, անտեսական, կրօնական — և հասցնելու զանոնք իրականաբար ազատութեան ու բարօրութեան:

Այդ մտքով ընկերվարական էին և Քրիստափոր, Չաւարեան ու շատ մը որիչ ընկերները, վասնզի խորապէս ժողովրդասէր էին, զեմոկրատ, վասնզի — ուսանողութեան օրերէն — փոքր ասեր էին ուսու և արեւմտեան դասվարաններէ ժողովուրդի պաշտամունքը, Տէր և խոնարհ, հարստահարած և հալածուած աշխատար ընդհանրութեան պաշտամունքը: Եւ անոնք չեն, որ պիտի խրաշէին «ընկերվարութիւն» բառէն: Սակայն և զիտէին, որ այն հետաւոր ազգային իդէալ մըն է — զիտէին անոնք, որ կթէ «ընկերվարութիւն» բառը սուր կերպով զրէր հայկական շրջաններուն մէջ, պիտի խրաշէին շատ շատեր անդէտ, անպատրաստ հասարակութենէն ու անգամ ընձեռքատ մատուրականներէն — և միութիւնը պիտի վիճէր... Իսկ իրենց զերազայն նպատակն էր — հրատապ ու ստիպողական — համախմբել մէկ դրօշի տակ բոլոր սրտացա հայրենասէրները, յանուն ընդհանուր պայքարի, ընդդէմ ընդհանուր ոտոխիս — սուլթանական բռնապետութեան:

Ուստի մերինները շատ աշխատեցան, յորդորեցին, որպէսզի հրեշտակեան պատուիրակը* առձամապես լուսիւն պահէ այդ բառին շուրջ: Բայց սա խրօստ կերպով էր պնդէր իր բաժնին վրայ, յայտարարելով օտջիւղիզքը, իբրև անհրաժեշտագոյն պայման — conditio sine qua non — ուժերու միութեան:

«Չէ՛ որ չեղափոխական կուսակցութիւնը պէտք է իր պարզ և որոշ ծրագիրն ունենայ... Երբ ցանկանում էր, որ Հեշտակեան կուսակցութիւնն

էլ միանայ ձեր կազմակերպութեան հետ, պէտք է որ ձեր ծրագիրը անպայման օտջիւղիստական լինի»...

Այսպէս էր պահանջէր Հեշտակեան պատուիրակը, իր իսկ խոստովանութեամբ: Եւ ահա մերիններուն պատասխանը:

«Ի հարկէ, ծրագիր կուենենք, սակայն, այնպէս պիտի անենք, որ մեզինք շխտանեցնենք շատ շատերին... Իսկական գործիչները մենք ենք լինելու, իսկ նրանք օժանդակողներ, դրամ աւողներ միայն, մենք ինչպէս ուզենանք, այնպէս էլ կը տանենք դրծը: Պէտք է իմանալ, թէ ո՞ւմ հետ խօսելու և վարելու է... ամէն կերպ պիտի աշխատենք կուսակցութեան նպատակը այնպիսի ֆորմուլայի տակ զնել, որ բո ուզածը լինի և Հրեշտակեան կուսակցութիւնն էլ մեր ընդհանուր միութեան մէջ մտնի... Մենք բառերին մեծ նշանակութիւն չենք տալիս, զիտարը զորձն է...»)

Եւ փրկարար բանաձեւը զանեցաւ: Մշակող ծրագրին մէջ իբրև նպատակ ընդունեցաւ ժողովուրդի տնտեսական և քաղաքական ազատութիւնը:

Ի վերջոյ, հասնազատ կը համակերպի, յաճախ, օակայն, կրկնելով իր այս ծանր մտահոգութիւնը՝ «մի գուցէ ես ականամիջ դաւաճանած լինիմ մեր օտջիւղիստական ծրագրին ու սկզբունքներին և խաղալիք դաճունքը բաժնուազական լիբերալ հասանքին:

«Չափանշոց վախենում էի նոյնպէս — կը շարունակէ Ռ. Խանազատ — որ ժրնելի ընկերներս շղիտի համաձայնին ընկերվարական տեսակետով այլօղիս անորոշ ծրագրին ընդունելու:»

Ապա խոմըրելու ընդհանուր ժողովին մէջ վիճաբանութեան կը դրի այն հարցը՝ թէ ո՞ր հաստատի Միացեալ կազմակերպութեան կեդրոնը: Թիֆլիզցիները կը շնտէին Թիֆլիզի վրայ: Ժրնելը թէ հետո կը երկրէն և թէ միանգամայն թիֆլիզցիներու մեծամասնութեան մէջ պարզ դիտարութեան կար՝ վերցնել դրծի զեկավարութիւնը Հեշտակեան երկու պարագուլիսներու ձեռքէն — պարտն և Իտիկին նազարէլիկաններու — ու որոնք համակրանք չէին վայելիլ Կովկասի մէջ: Խանազատ կը զրէ, որ իր խորհուրդով ժողովը կանդ առաւ Տրապիզոնի վրայ, իբրև կենդրոնի, ուր և թիչ լիտոյ պիտի զրկէին Չաւարեանն ու Արզուիկեանը:

Որոշուեալ «Հեշտակը թողնել ժրնելում, որպէս նոր կուսակցութեան օրակն — Քրիստափորի ու նազարէլի խմբագրութեամբ — և հրատարակել նաև մարտական թերթ մը «Գրօշակ» անունով:

* Ռ. Խանազատի հետ էր սրբապնդցի Հանլեակ Խուչարովանը, որ 1883—86 բաւաններուն ազատ ունկնդիր էր Ժրնելի համալսարանում, շատ ակտի մոլեւանդ իր մարտիկով մէջ, քան իր ընկերը:

* Տես Հայրենիք ամս. զինու. 1927:
**) Բաւալի չէ բերած, ի հարկէ, Խանազատի կողմէն 27 տարի առաջ տեղի ունեցած այս գրոյցը, իսկ ընդհանուր առմամբ զիտ պնդող է լինի:

Ի վերջու, յայսարարեցաւ, որ Հնչակեան Կուսակցութիւնն ևս մտած է նոր ստեղծած Միութեան մէջ: Հնչակեան պատերազմները մեկ նեցան Քիչիկզէն, որպէս զաշեակցականներ, զործեցին թանի մը շարձի Օրեան և այլ վայրերու մէջ յանուն «Հայ Յեղափոխականներու Գաշեակցութեան»:

Կազմեցաւ այդ Գաշեակցութեան առաջին Վարչութիւնը — «Կեդրոնը» — Քր. Միքայէլեան, Միմոն Զաւարեան, Արքաճամ Գառապեան, Յ. Լորիս-Մելիքեան և Լեւոն Սարգսեան, որ նոր վերադարձեր էր էրգրու մի իր ուղևորութենէն:

Կեդրոնի ժողովները տեղի կունենային մեծ մասամբ բժիշկ Լորիս-Մելիքեանի տանը, իսկ «Բրոշակի խմբագրական մասնաժողովի» նիստերը կը կայանային ներսիսեան գպրոցի ուսուցիչ Ալեքսանդր Մելիք-Ալաճիբեանի սենեակում (Աբրունական Բաթրոնի դէմ, Գործանկկի տանը, որ լեռոյ անցաւ Մանթաշահի ձևորդ):

Հնչակեաններու Միութեան յարիւր, ասարախտարար, կարճատև եղաւ ժրենեան կեդրոնի որոշումով այդ կուսակցութիւնը վերստին Հեռացաւ ու մկնուսացա*):

*) 1896ի խոր պատկառումն նոր, Հնչակեանութիւնը փաստօրէն դարձեցաւ գոյութիւն ունենալէ, որպէս քաղաքական իտեւալ մը մետապօր, քիչ-շատ մասնատար ու գործած, գաղափարական կուսակցութիւն մը: **Հնչակեան** անունը կրող անհատներ ու խումբեր շարունակեցին մոս հոն, գլխաւորապէս գաղութներու մէջ տղա՛նկ հրապարակը թերթերու ու ճառերով, երբեմն նաեւ մասնակցեցաւ ազգային ինքնակաշտպանութեան կրիւններու 1905—906ին, կամ կամաւորապէս շարժումներուն մեծ արտերազմի ջգրարքին: Մերք ընդ մերք — մասնատարաւէ Եւրոպեան Մանճակարտութեան առաջին տարիներուն — իրենք իսկ որչճակցական մարմինները, յանուն ժողովի անդորրութեան ու ազգային միացեալ ճակատի, համաբաշտութեան հրաւերներ են ուղկեր ճան Հնչակեաններուն, քայց այդ պարագան ոչինչ չէր անկողներ անոնց կուսակցական գոյութեան իրաւունքին ու յեղափոխական արժէքին: Աննք որ գիտէր, որ ոյդ ոյժ չէին անոնք հաւկական իրականութեան մէջ: Երբ երբեմն քանի մը արտաք, գաղափարական անհատներ հրապարակ կուզան այդ վաղեմի կուսակցութեան սեւերակներուն վրա, տարաբախտարար, անկի շատուր են այնպիսիներ՝ որոնք լինելով անբնորոշ ևս, որակաւ գործ կուտարու, քարչ կուսուն միայն անկարողի գոյութիւն մը, կը շահագործեն ճայ ժողովուրդի միամտութեանը, կը ինքնին ազգային զեկուրու շարքը ու միջանց համաձայնար ու այլ հակառակորդ տարրերն: Կ'արդարացնեն իրենց գոյութիւնը պայքարելով միայն ու միայն ը. Յ. Գաշեակցութեան դէմ: Եւրոյ պայքարը հնչակեան խումբեր մեկեմ Փոքր Հայքի ու Կիլիկիոյ մէջ, որ 1896 թուականին ք վեր դարձեր է անոնց շեղափոխական գործունէութիւնը: Իսկ Մեծ Հայքի մէջ կուսակցութիւնը գոյութեան չունէր մոյժ րուկանն ք վեր: Այս է իրողութիւնը, գոր պարտաւոր ենք արձանագրել:

Երբեմն ալ հնչակեան հակամարտ խումբերու երկպառակութիւնը կը վերածէր

Իր կարճատև գոյութեան ընթացքին Հնչակեան Կուսակցութիւնը շարք մը ծանր վրիպումներու հետ, ունեցաւ քանի մը յաջողութիւններ: Քիչ-շատ կրցաւ օգտագործել առաջին շրջանի համատարած ոգեւորութիւնը և շատարեց զուտ ազիտարար աշխատանք (յուզել, ցնցել, գանդաձնները, յանկարծակի խրտուներով, անհասական սերբրներով, կախողաններով...): Աշխատանք մը՝ որ սկիտասափելի սկզբնատրուկան էր ինչ որչէր շատ որչէր ժողովուրդներու ազատագրական շարժումներուն: Այդ անսակէտէ՛ն՝ պատմական քննադատութիւնը թերեւ շատ ալ խտտապահանջ լինելու է՝ հանդէպ այն յախտուն, գահավէժ քուլքերուն ու շարժումներուն, զորս Հնչակեանները նիւթեցին 1890ին մինչև 1895ը. — Կում Գալուսի քուլքը 1890ին Պոստլ մէջ, Փահր-Ախլայ արիւնալի գկպրիքը — 1893ին — երբ Հնչակեան գործիչներ ապստամբութեան կեղծ կրօնը հրատարակեցին մասճեանական ժողովուրդներու անունովը և յարուշիր հրատարակեցին յարձակումը հայոց դէմ, որու հետևանքով նիւթեցաւ Գողաթախոյ գարչուրիի գատավարութիւնը իր անզուլ մահա՛վճիտներով ու կախողաններով... Ապա Սասունի խրտուները 1893—94ին, առանց քիչ-շատ յուրը ու զինեալ պատրաստութեան: Վերջապէս, Բար-Ալիի 1895ի թափօրը, որ նոյնպէս կատարեցաւ յախտուն կերպով, ստանց զինքի ու կազմակերպութեան:

Հնչակեան գործունէութիւնը իր ամբողջ տեւողութեան ընթացքին ազիտացրական բնոյթ կրցաւ Տեսակ մը յեղափոխական հրավառութիւն էր, որու համար պէտք չկար մեծարանակ ուժերու, կուտակու, միջոցներու... Կուսակցութիւնը միանգամայն կանտեսէր ժողովուրդի ինքնապաշտպանութեան հոգը, որ սակայն, հայ շարժման ամենէն հրատապ հոգեկրէն էր: Նա չէր մտածեր ժողովուրդը զինելու, մարզելու մասին, և էրբ Հնչակեան Մուրաթը — Պոյաճեան — 1893ին Սասուն կերթար առաջին անգամ քիչ-շատ յուրը ժողովրդական բժրօտացում պատրաստելու, նա հարկադրած էր Կովկաս անցնելու և ը. Յ. Գաշեակցութեան օգնութեանը զիմելու (որ և իրեն մեկրծեցաւ): Եւ Մուրաթի ձերբակալումէն յետոյ, անոր բնկերը, Գժոճը-Նարայր, յուրը կարած իր կուսակցութեանէն:

փողոցային ընթացքաւ ու արհեստ անտարաններու, ինչպէս դիտեցին 1902 թուականն, երբ Լոնդոնի, Պայիթի, Օդեսայի հրապարակներուն վրա միջ միայն կտէնէր կը փուլէր հնչակեան պարագրիւններու դիմելը իրենց ճակտին բնկերներու գեղարարական տակ: Անրոյ շարքերն տեւց որսախոնավար, զգուսք բարոյանելով կրկնակներու մէջ:

սկսա գործի Տարօնի մէջ բացատարելու դաշնակցական միջոցներով, գաշնակցական ընկերներու հետ, կրկնով, սակայն, որոշ տոնն ԿՆԶԱԿՆԱՆ անունը (1895ին Հրայր արդէն մեր շարքերում մէջ էր)։ Կր մնայ Ձէյթունի պատմաբանութիւնը (1895—96 թ.), որ իբրք հայ ազատագրական շարժման կարեւորագոյն գրագիտներն մինն է և որու մէջ խոշոր զեր ունեցան հնչական խմբագիրները — Աղաի, Մլխ, Ապաճ, Հրաչայ Մարալ։ Բայց այդպէս ևս նոյն անփոք վերաբերումները, որ երեւան եկաւ կուսակցութեան պատակաւոր սօրերում, 1896ին Արարան, Տամատաններու կողմէ հին Կեդրոնի զէմ արձակած դատապարտութեան վճարողի մէջ զիստար մեղադրանքներէն մէկն ալ այն էր, որ կեդրոնը իր ձեռքը գտնած զէրքերէն ու մեծաքանակ դրամէն կէտ միայն զրկած էր ապստամբներուն և ան ալ ոչ ու ձախող կերպով։

Այս բոլոր թեւացումները չէին կարող տարբարուածող զեր շխաղալ յեղափոխական կուսակցութեան կեանքին մէջ։ Երես վնասեց Հնչական Կուսակցութեանը և կեդրոնացման սխաւմը։ Ժրնեկ, Լուստունէ կամ Աթէնքէն անկարելի էր զեկազարի լայնարձակ հայ աշխարհի շարժումները, եթէ անգամ կեդրոնի մէջ բազմած ինչէն հեղինակաւոր, ձեռնաս, մատար ու բարոյական արժանիքներու աէր մարդիկ։

Հեռակայնը — վաղամամ և մահացու պատկառումը։ Այդ կուսակցութիւնը երբեք չկարողացաւ — և չէր կարող — արմատ բռնել քիչ-շատ ուժով կազմակերպութիւններով Մեծ Հայքի ու Կովկասի մէջ։ Կովկասումս մատարականութեան շնչին սովոր միայն կը գործէր անոր զբոշի տակ — գրեթէ բացառապէս Կոստանի և Արձագանգի մարդիկ։ Նա ծնաւ, որպէս զգուրմային կուսակցութիւն և մնաց այդպիսին մինչև իր վախճանը։ Նա ծնաւ, իբրև կենսիկ հրամայական պահանջ, բայց չբկրցաւ բաղէլ կենսիկն հետ։ Սովը տիրեց միշտ անոր շարքերուն մէջ — սովի ամենէն աճաւոր տեսակը — մարդոց սովը... Պատակաւորմէն լետոյ ալ, նոր, զվերակազմեալ հնչականութեան պարագայիս լայնունցաւ Արփիար Արփիարեան, որ արդէն իսկ վարկարկեալ էր 1890ի ր ծառնոթ «Մեղաբանութեան»։ Իր շուրջ յարուցած ամբաստանութիւններով ու վէճերով նա ամբողջ տարիներ զբաղեցուց հնչականները և Քաշնակցութիւնը, որուն հետ անոր կ'ուզէին միտան, բայց մերժեցանք մարդւած գոյի մը, մեծատաղանջ արձակագիր և հրապարակագիր՝ Արփիար Արփիարեան, տարարախտարար, պատական փառաբարգոյն տիպի գրողներէն, անկողորմ, անկարագիր, միանգամայն անպէտք քաղաքական կուսակցութիւն մը վարելու համար և շատ չանցած, կերպք իր մահչանացուն, կերպական ձեւով, իր իսկ ընկերներու փրկակներուն տակ...

Մարդոց սովը... Նախքան պտակաւորմն ալ՝ մատերու վրա կարելի

էր համբել հնչական շարքերուն մէջ քիչ-շատ խոշոր մատարական գործիչները։ Մատարականութեամբ աղբատ մնաց այդ կուսակցութիւնը իր ամբողջ տեւողութեան ընթացքին... — մատարականութիւն՝ կիրթ ու սրացաւ, շխալ ու պարտաճանաչ, զեկազարող և շնչաւորող։ Միակ առաջնորդը կուզէր լեցնել իր անկէ համարող այդ ազնաւոր բացը. բայց չէր կարող։ Չուզեց ալ՝ ամեն նոր ստեղծուող «Նիդափոխականներու Քաշնակցութեան» մէջ։ Փոսխար շուտ ծայր տուաւ այդ կուսակցութեան շարքերում։ Նա պիտի բայրայէր ճակատագրորէն և որիչ մէկը պիտի գրաւէր հրապարակը։

Եւ այդ միւս ոյժը պիտի դար աւելի հիմնական գործունէութեան ծրագրով, նա պիտի լինէր Քուրբիոյ, Կովկասի, Պարսկաստանի, գաղութներու հայ մատարականութեան լուսադոյն տարբերուն վրա և հայոց գոյութեան կուր սուր վայրկեաններուն՝ պիտի համախմբէր իր դրօշին տակ — ողջ հայութիւնը։



Հայ քաղաքական կուսակցութեան ծնունդի օրերուն, Քուրբիայէն և Քուրբաց Հայաստանէն Քիֆիլի կեան ինքնարարար շարք մը նշանաւոր թուրքահայ զէմքեր։ Ամենէն նշանաւորները — Չաբեան, Յան, Ասիական։

Առաջինը, ընդի զէյթունցի, զեկազարող զեր խաղացեր էր 1878ի Ձէյթունի ծանօթ խաղութիւններուն մէջ, շղթայակապ Պոլիս տարւեր էր ու բանտարկւեր։ 1890ին նա մէկէն ի մէկ, «Ձէյթունի իշխան» անան տակ, յոյս ընկաւ Քիֆիլիի մէջ, Ներկայացաւ Գրիգոր Արծրունիին, ծառնօթացաւ մատարականութեան բոլոր ահաւատոր զէմքերուն հետ։ Բարձրաճակ, ջղուտ, երկայն թիկերով, ազուր կերպարանքով, մօտ 40 տարեկան մարդ մը, ինքնահասուն և մեծամուր, որ անդադար կը թմրկահահարէ, թէ Քուրբիան և Հայաստանը յեղափոխական կազմակերպութիւններու ցանցով պատած է, թէ ինք կապ ունի ամենուն հետ, կը զեկազարէ ամենն ալ... և եկած է առասանց եղբայրներու աշակցութիւնը խելելու։

Արծրունի և զաշնակցական մատարականները սկիզբէն իսկ թերահաւատ գտնեցան այդ տարօրինակ առաքելային ճանդէպ, որ զուրջ ծառնակին ըրեր էր օգտակար ճառալուծութիւններ, բայց այդ սօրերուն, անտարակոյս, խիտ կը շարժագործները Հայաստանէ մեւ ստեղծուած «չեղափոխական կազմութիւն» և «արշէլ ճառալուծութիւն» էր, որ կը մատուցանէր... Այլ օրերէն ի վեր Յարութիւն Չարբեան վարկարկեցաւ և

բաշեցաւ յնդափոխական Տրսպարակէն: Կը մնար, սակայն, անուին որոշ հմայքը և երկար ստեն դեռ կային շրջաններուն մէջ շահեանակաճներ:

Նման տարզուխ արկածախնդրի տիպ մըն էր մշեցի Սարկապը: Կոճկաս անցնելով, նա սկսաւ միտի պէս փողոսարել, թէ թորքահայ ժողովուրդը միանգամայն պատրաստ է ազատութեան կուի համար, թէ ինքն ալ գործեր է 12 տարի գաւառներուն մէջ և ծանօթ է բոլոր դիրքերուն, թէ լաւագոյն յարաբերութիւններ մշակած է քիւրտերու հետ. կը հաստատենք, թէ խումբերով մեծ բանակութեամբ զենք կարող է փոխադրել և բաժնել ժողովուրդին: Մշեցին աւելի հաւատ ներշնչեց կոճկասցիներուն, կարողացաւ օգտագործել անոնց խանդավառութիւնը և խոշոր գումարներ հաւաքեց ասպատակային խումբը կազմելու համար: Սակայն, ինչպէս կը տեսնենք հետագային, շարժարացոյց իր հանգէպ կըած վստահութիւնը և եզրահական վախճան ունեցաւ:

Վանեցի Յունօս (Ճարտիվիւն ալա), որ նույնպէս եկեր էր կոճկասցի կերպարներու օգնութեանը դիմելու «Դաշնակցութեան» ծնունդի օրերուն և որ կարճ միջոց մը — իր կենարի վերջին տարին — զործեց անոր դրօշակին տակ, բոլորովին տարբեր մարդ մըն էր, հակառակորդ Սարկապի ա: Չարքանի: Կիսազբազէտ, լազթ, առոյգ աղամարդ մը, որ ասպատակային խումբ մըն էր վարել և արկածալից կենանք մըն էր անցուցնը հերոսական կռիւներու մէջ, քիւրտերուն հետ. ամբողջ ամիսներով թագնած մնացեր էր մութ, խոտն զնտնայարկերուն մէջ, խուսափելու համար զինքը հետապնդող իշխանութիւններէն: Մարդ մըն էր, որ չէր թմբկահարեր միտ երկուրին պէս, չէր տարբեր շատախօսութեամբ, ինքնազովութեամբ — տիպար հայդուկ մըն էր, որ կը գործեր լուռ ու մուռ, չի հաշարելու վրէժնազրութեամբ թուրքերու և մասնաւոր քիւրտերու հանդէպ, որոնցմէ շատ շատերն էր մեկուցուցի իր անվրէպ զրնդակներով: Նոր կազմուող «Դաշնակցութեան» ուշադրութեանէ, բնականաբար, չէր կարող վրիպիլ այդպիսի մարդ մը: Տարաբախտաբար, ընդամենը տարի մը լետոյ, այդ մեծ հայդուկը պիտի նահապտակէր անհասարար ճակատամարտի մը մէջ:



Սարկապի, մասամբ և Չարքանի բարոզութիւնն ու լուստես յայտարարութիւնները միանգամայն ապարդիւն շանցան: Անեցեմով սաստիկ խանդավառեցան Պետերբուրգի բարձրագոյն

գործընկերու խումբ մը հայ ուսանողներ, որոնք արդէն մկրուած էին նոր շարժման աւազանին մէջ:

Խումբի հոգին էր ուսիրացի Սարգիս Կուկունեան (Նուխուայ գաւառի Նիմ զիւլէն): Պարագլուխներէն էր ան հայրենասէր խմբակի, որ 1889-ին թարգմանաբար հրատարակ նետեց ծանօթ մարտաշունչ բրօշուրները բուզարական կենտրոն («Բուզար Աւազակապետ», «Ազրայիլ», «Գանձօ» և այլն): Երիտասարդ արդէն իսկ ուխտեր էր «երկիր» անցնելու, և ազատ ժամերուն զինավարժութեամբ կը պարապէր: Գիտէին այդ իր ուսանող ընկերները: Լեւեր էր Կուկունեանի մասին և Կարապետ Ազնաւուրի անունով շահապաշտը (ինքը խնամակալն էր Սանասարեան զրպարոցի), կը հովանաւորէր Կուկունեանը. և երբ, որ մը, վերջինս գնաց անոր առջեւ իր սիրտը բնաւալու և խորհուրդ հարցնելու, Եզեան հետեւեալ ծրագրին առաջարկեց երիտասարդին.

— Երթալ Պարսկաստան, մտնել պարսից ծառայութեան մէջ, ստանալ խանի տիտղոս — իր, Եզեանի աշակցութեամբ — հաստատուլ թորքպարսկական սահմաններուն մօտ և, բաւականաչափ ոյժ կազմել չիտոյ՝ կազմակերպել շարժումներ Վասպուրականի մէջ: Պարսկաստանի շարք մը հայազգի բարձրաստիճան աններու համար:

1890 թ. մայիսին հայրենասէր երիտասարդը, իր բանի մը ընկերներով մեկնեցաւ Քիֆլիդ ու գնաց խորհրդակցելու Գրիգոր Արծրունիի հետ, Կօջորում: Արծրունիին սիրով ընդունեց Կուկունեանը և թելադրեց հրամարիլ Եզեանի ծրարը — որ երկար ժամանակ կը պահանջէր ու ոնցնիլ խումբով թուրքաց Հայաստան: (Եյն ստեն Քիֆլիդ հասած էր անգլիական «Դէյլի Նիւզս»ի թղթակից Ֆից-Ջէրալդ, որ եկած էր իր թղթակցութիւններով Երուսալի, մասնաւորապէս Անգլիայի, ուշագրութիւնը հրաւիրել թուրքաց Հայաստանի վրա):*

Կուկունեան Քիֆլիդի մէջ դարձաւ ընդհանուր ուշագրութեան առարկայ: Պետերբուրգէն եկած խումբը զրկարաց ընդունելութիւն գտաւ Երիտասարդ Հայաստան» կոչած գաղտնի ընկերութեան մօտ, — ընկերութիւն մը՝ որ շուտով պիտի մտնէր 2, 3, Դաշնակցութեան մէջ: Աւ

* Այդ խորհրդատու մարդը, որ կենդանի շփման մեջ էր Արծրունիի և հայ մտաւորական շրջաններուն հետ, որ մը ամուսնուածայն կերպով անհետացաւ ռուս-սահմանական ամենամներուն մօտ. կենթարդի թէ զոն գնաց յորսական դասարարեան մը:

սկսա կամատրեմբու հոսանքը: Զինք չկար, սակայն, և ամենքը զինավարժ չէին: Գիմեցին ժողովարարութեան նշխիրք Արթուրին կը բաշտերէր զայն՝ իր անձնական զինումներով: Հայ հարուստներէ՝ Առաքի Սաստրեան յանձնեց Կուկուեանին 5000 քոբրի, խոստանալով անկի խոշոր ներքառութիւն հետագային:

Սարկաւագի յորդորներով և «երիտասարդ Հայաստան»ի աշակցութեամբ, Կուկուեան ձեռնարկեց մեծ արշաւախումբ մը կազմակերպելու, քանի մը հարիւր երիտասարդներէ, որ պիտի նրթար շանթի պէս հարածովու թշնամին սահմանի միւս կողմը, շարք տալու քիզդերուն, իրարանցում հանելու և ներպայի ուշադրութիւնը հրափրելու հայ դատի վրա, իրազործելու ճիշդ յօդածը ... 1890ի գարունն էր: Համայնարանական խմբակներ իր սպայակոչողով թափօր կ'ընէր Ակերանդրապոլի ու Կարսի շրջաններում, կամաւորներ հաւաքելով և ամենուրեք կ'արժանանար ժողովրդական խելայից ցոյցներ: Կուկուեանը, «Սարգիս ազան» հանգէս կուգար, որպէս «Փրկիչ»: Իւրաքանչիւր կը զոհարերէր, ինչ որ կարող էր: Կուսային քնակարան, անոնց մարդկանց ու ձիերուն: Կանայք կը հոգային զինուորներու ներմակեղէնն ու այլ անհրաժեշտ պիտոյքներ: Երեսնանր խումբ խումբ «Մեր Հայրենիք» կ'երգէին: Ողջ Երիւրկը տօնական կերպարանք էր տանք... Տեղի ունեցան օրտաշարժ զկաբեր: Կամաւորական սպայակոչորի այդ թափօրը եղաւ տեսակ մը տրամալարի կոզկաստանայ ժողովուրդին՝ հանդուղ իր տառապող եղբայրներուն: Քաշ-Քաթիկոնար զիւրի մէջ երկու մայրք բերին իրենց երկու զուակը Կուկուեանին, խնդրելով, որ տանէ զանոնք Հայաստան՝ իրենց բոլորեւս վրէժը անկելու: Ուրիշ կին մը, Մարթն, լաւ հրաքանածիկ և զինավարժ, կուզէր նշնալէս երթալ կուկու թշնամուն դէմ և սպարդին զինումներ կ'ընէր խմբակային:

Արշաւախումբը կանէր օր աւուր: Կային կամաւորներ Հայաստանի բոլոր ծայրերէն, շատ մը թորքահայ երիտասարդներ, Ալաշկերտցի, Մշեցի, Վանեցի և այլն: Մեծ մասը Արարատեան զուտանրէն էին, շատեր անփորձ, փափկասուն տղանր: Արշաւանքէն յետոյ, Մշեցի Մեհրոզ Կարդաեան աշապէս կը գրէ բառացի իր յուշերուն մէջ. — «Մեկուկեց կարող եմ ասել, թէ երբ մասը տղերքանց փափուկ այգրած տղերք են, ոչ թե՛ շալակեկ տեսած են, ոչ անօթութիւն, ոչ աշապէս երկար ճանապարհ բայժ ունէին: Բայց այն սէր, որ սպասարած էր անոնց սըրտին մէջ, ոչ թէ այն ննդութիւններ, այլ ամենայն սիրով մեռնիլ սպի ազատութեան համար»:

Հապաղիտ վերապարդներէն՝ Քարիզեցի Յովսէփ Մոզտեանն այ հետեւեալը կը գրէ իր յուշերուն մէջ.

«1889 թիւն երբք ընկերներով, ես Յովհաննէս Քիթիլցցին և Զարաբազի Արրասամը անցանք Տանկահայաստան... Քիթիլց վերադառնալով, Արրասամի հետ մտածեցինք մի հրոսակային խումբ կազմենք և անցնենք Տանկահայաստան, ազատելու համար մեր կերպարներին ու բոլորիին... Մեզ միացաւ Եփրեմ Գանձակեցին, Պարսկաստանի ազազայ հերոսը... Մեզ միացաւ նաև Վիրաբ Գաշոյեան և Արրասամ Գաղէթեցին, որը 12 տարեկանից, մի թուրքի սպանութեան պատճառով փախըտական կեանք էր վարում... Ուզում էինք անցնել Զարաբազի և Գանձակի կողմերը՝ մեր խումբը անկի ստարացնելու կոտի հմուտ քնկերներով: Բայց այդ օրերում Քիթիլցովմ յայտնեց մէկուկեց Յալըր Սարկաւագին: Բայց այդ օրերում է համոզեց, որ անկի լաւ է միասին դորկուարը, որ եկաւ մեզ գտաւ և համոզեց, որ անկի լաւ է միասին դորձել... Գրա համար էլ մեզ տարաւ ծանօթացրեց Կուկուեանին հետ... Ես, Եփրեմը և Վիրաբը ճանապարհուցեցինք Սարգամիշ, որ Կուկուեանին տեսանք՝ ամառանալիք աշխատանքից փոխած զինվանցի առաջակ Սարգիւրի հետ: Հէնց այդ օրերին էր, որ եկաւ (Քիթիլցից) Յովսէփ Արթուրեանը: Ես եկել էր մեզ համոզելու, որ մեր խումբը ցրենք: Բայց մեր շճամասնեցեցինք: Մեկտեմբերի 23ին, 110 հոգուց բաղկացած մեր խումբը Զուրուկից Եասնոյի վրայով անցաւ տանկաց սահմանը... Արշաւախումբի մէջ էր և էրզրումցի «Փեւաթառ Արշալը», սպազայ Քուկուեանը:

Կուկուեան կուզէր բառ կարելու շուտ անցնիլ սահմանազուտը, բայց մէկ կողմէն չէր տեսներ անհրաժեշտ դրամական օգնութիւնը Քիթիլցիէն, միւս կողմէն բուն առաւելորդը, վալազը, Մշեցի Սարկաւագը չէր ուզէր բայել և միշտ ներսնոր պատրաստի կը հարէր յետանդուտ արշաւանքը: Ի վերջոյ սէը համոզիին», որ նա պարզ խաշաղող մըն է և Սարկաւագը կը սպանել:

Ահա թէ ինչպէս կը պատճէ դեպքը Մշեցի Մեհրոզ Վարդաեանն, արշաւախմբի ողջ անդամներէն.

«...Կարս և Ակերսանդրապոլի հայաբնակ զիւրեր ամբողջ կը սպասէին Սարկաւագի Հայաստան մտնելուն... Կարսի փողոցներ կը տեսնէիր ամէն զոյնի մարդ: Այդ բոլորը եկած էին բտելով, թէ Տարծնացի Սարկաւագ ինչ որ բռն, մենք անոր խօսքին պէտք է մեռնինք. այնչափ ժողովուրդ Սարկաւագը հաւատացեր էր, իբր յուսարիշ մը... Ակերսանդրապոլի քուսական զօրանցներու հայ զինուորները ամբողջ պատրաստուած էին... Սարկաւագին կը սպասէին. այնտեղից կարող էին Լօժ բաժնից սահման անցնել հանդիստ: Սարկաւագ սպանեց այսօր-վարք բաժնից: Բայց Կուկուեան Սարգիս յուսահատեցաւ, կանկեց և մեռնիլ իր երկկոյ իր երկնայի ի՞նչ կը սպանաւ, ի՞նչ է թո նպատակ... Սարկաւագ պատասպանեցաւ:

խանց, որ Քիֆիդէն ինձ նամակ կայ, եւ այս տարի չեմ կրնայ նրբալ, մինչև գարուն: Պատասխանել Մարգիս (Կուկունեան). երբար, այս-րան մարդ մեզ կը սպասէ... Եթէ մենք սպասենք գարնան, դրանցից մէկին չենք կրնար գտնել, որս կառավարութիւն կիմանայ, չէ՞ կը լինի մեր ապագան: Մարգիս, Մարգար, Յովնան շատ մը խօսելէ վերջ, համոզեցան, որ Մարկիսաց խաչագող մըն է...:

Մշեցի Մեհրապ Վարդանեան իր այս լուրերը զրի առած է 1900 թ. հոկտեմբերին, Բուզարիոյ մէջ: Փարո ու Համոզեցուցիչ չէ, ի հարկէ, անոր պատմութիւնը իր համագիրդացի Մարկիսացի մասին, որ ստացեր է մատենիչն ու դաւանանին արժանի մահուան պատիժ: Առեղծածի բաժին մը կայ Մարկիսացի ողբերգութեան մէջ, ինչպէս հայ շարժման բազմաթիւ ուրիշ նման դրագներուն մէջ...:

Իրողութիւնն այն է, որ Քիֆիդեան եւ հակառակ էին արշախառնութի մեկնելուն ու դրամ այլ եւս չէին զրկեր: Ժողովրդական շարժումը մեծ ծաւալ տոներ էր... գուցէ զինպարեանք շարեր էին այդ անակնկալի առջև... Գուցէ կը վախենային որս իշխանութիւններու միջամտութենէն ու ծանր ֆիւսքով մը... Գուցէ՞ վտանգալուր կը գտնէին յայտուուն ու հապուկ արշաւանքը գալիք մեծ շարժման յաջողութեան համար... Այսպէս թէ այնպէս՝ անվճռականութիւնն ու վարանումը կը տիրէր Քիֆիդեան զինպարեան մէջ:

Իբրոք՝ որս կառավարութիւնը սկսեր էր իր խտտութիւնները: Առժամայկէ աչք էր զոցիք հայկական խմորումներուն վրա, բայց կըր ասոնք մեծ ծաւալ առան, սկսաւ հալածել. հակողութեան տակ առաւ կարեւոր դրժմիչները: Կուկունեան ապատրոջն կրնէր իր պտոյտները զուստներու մէջ, շնորհիւ ժողովուրդի գաղտնապահութեան: Կամաւորները փոքրիկ խումրերով կը պահէին հայ դիպիւրներ մէջ:

Հայ Յեղափոխական Գաշնակցութիւնը կազմակերպուր էր արդէն: Վայրկեան մը անոր վարի: Մարմինը նպատակայարմար գտաւ Կուկունեանի խումրին շուսափող մեկնումը զէպի Քուրբաց Հայաստան: Բայց չիտայ իտմաւարութիւնները փոխեցան: Եւ մինչ-մտիս հետէ՛լ սուրհանգակները գացին զէպի Կարս համոզելու Կուկունեանին, որ հրժարի իր ծրագրէն ու ցրւէ կամաւորները: (Շատեր արդէն հեռացած էին ձգձգումներուն շնորհիւ): Գնաց նախ Կոստանդին խտտեանն, նորակազմ Մարմնի հեղինակաւոր անդամներէն մին: Ապա զնացին Զաւարեան ու Արզութեան: Ապարդիւն անցան բոլոր յորդորները: Մարգիս Կուկունեան, սքանչելի անձնուրաց մը, բայց յամա ու լեցած իր ներթական առարկութեան հմայրով, բաշակուած ժողովրդական միահամուտ ցոյցերէն, լուրից ականշ կախել Քիֆիդի յորդորներուն ու 1890ի Սեպտեմբերի 22ին

մեկնեցաւ զէպի սահմանագլուխ: Ետը 100 հոգի ձկաւոր: Բահանակներ մեկնեցին, հարիւրաւոր դիպացիներ արտասուլից աչքերով ողբերք մազորհեցին: Չորջ հայկական զբոշակներ կառանքողէին խումրը: Մէկուն վրա՝ Գրիգոր Լուսաւորչի պատկերը, միտին վրա՝ առեւ մը, նորրբ, մեղրով նկարուած: Զէպերն էին՝ այնպա ու սուրմարու հրացաններ, եւ րոպական սարճանակներ ու գաշոյններ: Զգեստները՝ կողակի ու լազի: Սուերուն զրած Մ. Հ. (Միտիլին Հայաստանի): Կային խումրի մէջ ու որսաց բանակի հայ զինուորներ ու մէկ հարիւրապետ, անայցիացի Ստեփանը, որ կը սորվեցներ պէտր եղածը կամաւորներու:

Երբ հասան որսական Բասէն Զուրիկ գիւղի մասեր, Կուկունեան ու իր օգնականը Աբրահամ դիմեցին արշախառնին նոր յորդորով:

— Մե՛ն շուտով կը մտնենք Քուրբաց Հայաստան. լաւ մտածեցէ՛. ա՛յնտեղէ վեազարձ չկայ: Մե՛ն կ'երբանք մեռնելու. որպէսզի ճանապարհ հարսէն կալի կառոջ շարհերուն համար: Քող ոչ ոք ձեզմէ յոյս ունեւայ, բէ կարող է ողբ մեալ: Ով որ առկէ կը վեառ, բող այժմէն վերագաւան...:

Ոչ որ վերագարծաւ:
Սահմանն անցնելուն պէս — անյաղթելի խոչընդոտներ... Խումրը կը գարնէ Բիւտեան — յախտնեական ու ճակատագրական պատահարին, որ սկիզբէն ի վեր հետապնդեր ու անդամարտծեր է հայկական շարժումը Քուրբ բռնապետութեան դէմ... Նախ փոքրաթիւ ծխուորներ էին այդ քիւրները ու աղբքը թիչ մը լազեցուցին վրճիմնագրութեան ծարաք, գանտնք կատարելով: Բայց հաւարին վրա շտացան քիւրքերը. ետեւէն հասաւ ու կանոնաւոր Քուրբ զօրքը: Կը մնար նահանջել զէպի որսական հողը: Նահանջեցին կազակներ ուղղութեամբ: Բայց հեն ալ որս սահմանապահ կողակները դիմաւորեցին խումրը: Կուկունեան խտտի պատիրեր էր շրջնագրել որսերուն: Բայց երբ այդ ազէս ու բիրտ կողակները կրակ բացին «հայ աւազակներուն» վրա ու սպաննցին նազոն, աղայը այլ եւս համարիւրցին ու գաշոյնով խողխողցին սպանող կողակը... Այդ վայրկեանէն ու սկսաւ արշախառնութիւն ողբերգութիւնը:

Կուկունեան պատիրեց տղաներուն փախչել, իսկ ինքն անձնատուր եղաւ որս զինուորական հրամանատարութեանը, որուն բացառեց խումրին նպատակը: Խումրէն 60—70 հոգի լազեցուցան փախուտ տալ ու ազատիլ: Ուզեցին Կուկունեանն ալ փախցնել իրենց հետ, բայց նա մերժեց ու անձնատուր եղաւ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ գտաւարութեան ընթացքին պաշտպանելու: հայկական գաւոր: Զերբակուցեալ:

Վրմէ առաջ ձերբակալած էին արզնի քանի մը տասնեակ կամաւորներ, որ չէին կրցեր փախուստ առլ, կամ թէ նոյնպէս չէին կամեցեր:

Կը արտին Կարս: Տպագորութիւնը շշմեցոցիչ էր կողմաբան հալութեան մէջ: Հայ ժողովուրդը սուրի մէջ էր: Մարտին Տափիրեան, մեր սահաւաթի: Տին ընկերները, որ սկանառես եղած է արշաւանքին և ինքն այ մէկ-երկու ամիս քանտ նստոր է Կուկունեանի գործի առիթով, հետեւալը կը զրէ «Հայրենիք» ամսագրի 1923 թ. Ապրիլի թիւն մէջ:

«Երբ նրանց ձերբակալած բերին Կարս և բանտարկեցին, ամբողջ քաղաքը սուղի մէջ ընկաւ: Երբ բանտարկեալներին զորս էին բերում բազմից ամանելու համար, այդ օրերը քաղաքը ստանում էր կէտ-ամանկան և կէտ-սուղի կերպարանք: Ետտեղ խառնութեանը փակում էին: Երեխաների փորձերի խումբեր սկսում էին Մեր Հայրենիք երգել: Կայանաւորները ձայնակցում էին նրանց և բաղնիք գնալու զկայք ստանում էր քաղաքական ցոյցի բնույթ: Գրա հետեւանքն այն եղաւ, որ բաղնիք տանելը վերաջրի և բանտի պայմանները խտտացան... Ապա խումբը տարան շղթայակապ — Երևան: Երկու տարի բանտ ու քննութիւն կանխօրէն որոշած էր այն զոյնք ապ հայկական արշաւախմբին, որ իբր նա կը գործէր միաժամանակ Ռուսաստանի զէմ և մրաքան էր Մեծ Հայաստան մը ստեղծել: Հայ կամաւորներու գրօշին վրա գրւած «Մ. Հ. աստեր — որ կը նշանակէին «Միութիւն Հայրենասիրաց» — անոնք (ցարական ընկէշներ) կ'ուղէին անպատուա թարգմանել «Միացեալ Հայաստան»...»

Տեղի ունեցաւ մեծ, ազմկայուն զատաւարութիւն երևանի մէջ: Ցարական ատենը զաժան եղաւ: 26 հոգի արտուրեցան Միբիր: Անոնցմէ 16ը զրկեցան այդ երկրի ամենահեռաւոր ծայրը — Մախալին, որ երկար տարիներ արեւելին տաժանակիր աշխատանքի մէջ: Կուկունեան, իբրն խմբապետ, զատաւարուեցաւ քան տարան տաժանակիր աշխատանքի՝ որմէ եօթ տարին՝ շղթայակապ: Անուհետն յախտեանական արսոր Միբիրում: Մէկ քանիսը հետագային կրցան փախչիլ: Անոնցմէ էր Եփրեմը, որ երևանի զատաւարական զատաւարութեանն քան տարի յետոյ, պիտի ստանձնէր պարսից յեղափոխական բանակի հրամանատարութիւնը և պիտի քշէր յետագէմ Տաճնշահը իր զահէն ու երկրէ... Փախչողներու մէջ էր մեր մի ուրիշ ընկերը՝ Ստեփան Ստեփանեան (Բալաշան), որ 1915ին տարագրեցաւ էրզրումէն ու նահատակեցաւ:

Մէկտեղ փախան Եփրեմ, Բալաշան և վերը յիշատակած Յ. Մովսէլօսանը: Յուզիչ ոգիսական մըն է երեքի փախուստը, ինչպէս և այդ ամբողջ հէթեաթային արշաւանքը Մարգիս Կուկունեանի: Երկու ամիս Մախալենի անատներուն մէջ զեղբերէլ յետոյ, լստտ մը կը չինեն և

ուժ օր ծովու վրա մնալով, կանցնին Քաթարեան եկզուցը և զուրս կուգան Մախալին կղզիի հակառակ կողմը, վարենի Գիլակներու մօտ, որոնք հոմ ծովուց կը կերակրեն մեր տղաները: Կազդուրեղ յետոյ, կը շարունակեն իրենց հանապարհը Ամուր գետի վրայով: Կուգան Աերխնի Ուղիակ քաղաքը, Բայկալեան լճին մօտ: Կը ձերբակալին: Նորէն շղթայ և նորէն բանտ: Քննութեան ատեն կը հաւատացնեն որ իրենք թարփ-ղեցի են: Հայու մը օգնութեամբ կը ստանան կէզմ անցաղիները, կալապիս բանտէն և համբան շարունակելով, վերջապէս, 1896ի հոկտեմբերին կը հասնին Քարիզ:

Ինքը Կուկունեան միայն Մախալինի մէջ ամբողջ 15 տարի. վերագործաւ 1906ի ներման օրերուն հայրենիք, վերստին նեւուցաւ յեղափոխական շարժումներու մէջ — այս անգամ ընդդէմ ցարիզմի — նորէն բանտարկեցաւ: «Պաշտակցութիւնը» կազմակերպեց իր յաջող փախուստը Գանձակի բանտէն. Կուկունեան մէկ ընկերուց հետ փախաւ նոր-Բաւար լազէտի ուղղութեամբ: Բայց երբ կը պատրաստէր սահման անցնիլ, վերստին ձերբակալեցաւ և այս անգամ, իբրն մեծագոյն պատիժ, կոխադրեցաւ Կովկասէն բուն Ռուսաստանի Օրբոյ քաղաքին բանտը, որ ցարական կառավարութեան վատմարագոյն զեղանն էր, ուր կը նետուէին ամենէն վտանգաւոր քաղաքական յանցարարները: Եւ այնտեղ ծանրօրէն հրամազացաւ ու շարաւար տանջանքներու մէջ մեռաւ այդ սքանչելի հայը, որ մարմնացած ակ էր, զազափոր ու զոհոգութիւն, և որ եղաւ հայոց ազատագրութեան մեծագոյն նահատակներէն մէկը:

•••

Կուկունեանի արշաւախումբին այդ եղբրական վախճանը պաղ շուր ժաղեց, ի հարկէ, հայերու խանդավառութեան վրա, լայն շարժումը չկանցաւ: Մեծ էր հմայքը նորածին «Պաշտակցութեան», որու զուրս կանգնած էին հայոց ազգի ամենէն զազափարական զէմբերը:

2. 3. Գաշնակցութեան զաղափարային պատկերը.—ժողովրդական և դեմոկրատ.—Խրիմնանի, Նաբանդանի, Բաֆֆիի սերունդ.— Գաշնակցութեան Վեդրոնը.— Դարձիներ զէպի երկիր.— Տպարան և առաջին բողոցիկներ.— Հայկական շաւրման վիպական շրջանը.— «Ջանկիներ».—

Մենք երկար ծանրացանք «Գաշնակցութեան» ծնունդի պարագաներուն վրա, վասնզի այդ վերջինները մասամբ արգէն կը Նախորդին Կուսակցութեան գալոց ճակատագիրը: Մեծ ևր նոր քաղաքական մարմինը հայ ազգային իդէալով, կը յենուր զազափարական երիտասարդութեան օտար շարքերուն վրա, կազդարարէր ազատութեան զազափարին հետ ուսմկավարութեան հաստատմը: Հայ ունեւոր զասակարգը վազաժամ չընէր զայն: Հայ խոշոր բուրժուական շարունակեց իր կրտսորական գիրքը շարժման հանդէպ՝ անոր ամբողջ տեղութեան ընթացքին: Հետացան նորակազմ Գաշնակցութեան և այդ խոշոր զբամատիրութեան անանի բաներները, իդէալիզմը: Մնացին հրապարակի վրա հայ մտաւորականութեան ժողովրդական տարրերը: Մնաց հրապարակի վրայ— հայկական դեմոկրատիան: Նա՛ ևր, որ կը կազմէր սկիզբէն ի վեր Գաշնակցութեան ողնաւարը: Նա՛ ևր, որ պիտի լցնէր մեր շարքերը բառատուն տարի շարունակ: Անշուշտ, ուրիշ զօտակարգերէն ևս— վերին, բարեկեցիկ, բուրժուա և նշնիակ ազնական խաւերէն— մնացին հատ-հատ գործիչներ շարքերուն մէջ— իրենք ալ ազնական՝ սրտով ու մտքով: Բայց գործիչներու ճնշող միժամանակութիւնը սկիզբէն իսկ, թէ՛ Կովկասի և թէ՛ Քուրքիոյ մէջ, հայ ժողովուրդի խոնարհ՝ վարին խաւերէն էին, շինականի, արհեստաւորի, քահանայի, կամ մանր աւետարականի զաւակներ, ուսուցիչներ— ներսխանան գարօցի, Կեդրոնականի, Գեորգեան ճեմարանի, թե՛մական ու այլ զարոցներու ուսումնաւարտներ— գրասենեկային ծառայողներ, այլ և բազմաթիւ համալսարանականներ, պետական համեստ պաշտօնեաներ, ճարտարագէտներ, բժիշկներ և այլն:

Հայկական շարժումը չէր կարող ուրիշ բնոյթ ունենալ, բայց եթէ միայն դեմոկրատիկ. ժողովրդավար, վասնզի հասանքը սեռացող սկունքներն էին, մէկ կողմէն՝ երիմեան և Ալիշան, միւս կողմէն՝ Բաֆֆի և Նաբանդան... Հայ յեղափոխական մտաւորականութիւնը զազափարային ժառանգութիւնն էր այդ մեծ, ժողովրդամիտ ուսմկարաններուն:

2. 3. Գաշնակցութեան Կեդրոնը փութաց ճամբի իր զեկավար ուժերը զէպի գաւառ, ստեղծելու ամենուրեք տեղական կոմիտէներ: Ուժերը զրիւնցան Նաև զէպի Քուրքիա— Տրապիզոն, Պոլիս, Վան և զէպի Քարախասան, որ գրուն էր Վասպուրականի Ջաւարան և Իշխան Արշոյթեան հաստատեցան Տրապիզոն, մէկը իբրև տեսուչ, միւսը՝ ուսուցիչ տեղւոյն վարժարանին մէջ: Հոն էր արգէն Յարութիւն Շահրիկեանը, որ Խանազատի միջոցաւ ինչորք էր կովկասցի համալսարանական ուժեր զրիկ Տրապիզոն՝ իրթական գործը զեկավարելու համար*):

Յովհաննէս Իսուսիան կը զրկի Պոլիս, Պետոն կերթայ Պարսկաստան՝ մօտէն զիտելու: Վասպուրականի անց ու զարձը և ինքն ալ հոն փոխադրելու համար: Նոյն ուղղութեամբ գացին շատով վարդան և Դուսան—վերջինը Բազում ընկերներու միջոցներով: Ուրիշ զեկավար ուժեր ևս ճամբեցան զէպի Քարախոս և Մամուստ, հիմնեցաւ Ատրպատականի հայաշատ կեդրոնին մէջ «Գաշնակցութեան» առաջին զինագործարարը, որում զգիտար զեկավարն եղաւ երկար ատեն Գալուստ Աղոյեան, երեսնցի մեր երախտատար ընկերներէն մէկը, որ 1915ին խոշորուցաւ թշնամու զաւաղի մեղորով Հին Բայազետի մէջ:

Նորածին կազմակերպութիւնը շատպէց ցուցնէլ հայ աշխարհին իր քաղաքական զէմը: Նախ կազմակերպեց իր մամուլը: Գեմարին գործ: Յարական ոստիկանութիւնը արթուն կը հակէր: Գիւրին բան չէր Կով-

* Ջաւարանի և Արդուրեանի նպատակն էր՝ իրենց կրթական պաշտօնակութեան ընթացքին մօտէն զիտել Քուրքիան, ուսումնասիրել տիրող ընդմեջ ու ժողովուրդի վիճակը: Ծուտով, սակայն, կաւաճարութիւնը հոս ստաս... Ուսուցիչութիւնը մը կատարեցաւ նորի վարժապետներուն քով և երկուսն ալ բանտ ևնտնցան:

Թրքական առեակի առջև: Ջաւարան կարաստանը պաշտպանողական ճառ մը: Կը դատաւարտի չորս տարւան թերզարգելութեան, սակայն ուսուց զեսպարի պահանջին վրա՝ կը յանձնի կովկասեան իշխանութիւններուն (1891):

կաթի մէջ դազանի տպարան հաստատել և քերթեր հրատարակել: Առ-
ժամանակ բուսականացան Թուրքիկներով:

Թուրքիկները կը սպաղրէին Ռուսոսն և Շաքիրեան: Ունէին փոք-
րիկ տպարան մը, ուր կաշխատէին գիշերով: Տպարանը սկիւրը շնայ
Սուրյոյ առեւտրի մասն էր, նկուզի մէջ. ապա փոխադրեցին
Ս. Գառիթ ասրի կողմերը, որ. ժնեխայնեց տան ներքնայակը: Եկի. Մա-
տիկեանն ու Արշակ Թաղեոսեանն այ կը մասնակցէին այդ աշխատանք-
ներուն:

Հետաքրքիր է այս առաջին Թուրքիկը, որ Կուսակցութեան ան-
գրանիկ հրովարտակն է,* գրած, ամենայն հասանականութեամբ,
Քրիստափոր Մերսյալեանի և Խ. Մալումեանի ձեռքով**): Կարնոյ ա-
պրտամարտութեան վաղորդայինն էր:

...Ախոր ներուպան իր առջ անուսում է մի ամբողջ ժողովուրդ մի
ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները...
Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին առաջին հարցը, որ պէտք
է գրազնեցնի ամէն մի հայրենասերի,— այդ բոլոր յեղափոխական ու-
ժերի միութեան և դաշնակցութեան հարցն է:

...Հայ յեղափոխականների Դաշնակցութիւնը ստրտեով... զիմում
է բոլոր հայերին և հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ:

...Նկատանի զնկեով Թիւրքաց Հայաստանի բազարական և տնտե-
սական ազատութիւնը, Պաշնակցութիւնը մտել է այն կռիւ մէջ, որ
սկսել է ինքը ժողովուրդը տանկաց կատարութեան զէմ, ուխտելով
մինչև արեան վերջին կաթիլը կուռի հայրենիքի ազատութեան համար...

...Քերթն, կըրայրներ, միանանք յանուն սուրբ գործի բնդա-
նուր թշնամու զէմ:

«Եւ զուր, կրիտասարդներ, միշտ և ամէն տեղ վսեմ պազափարների
պաշտպաններ, միացել ժողովրդի հետ:

«Եւ զուր, ալեկարդ ծերուիներ, ոգևորեցէք ձեր որդոց և օգնեցէք
նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

«Եւ զուր, հարուստներ, բաց արէք ձեր քուկները, զէնք հայթա-
թելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց
է արի թշնամու զէմ: Եւ զուր, հայ կիներ, ոգի ներշնչւր սուրբ գործի մէջ:

«Եւ զուր, հայ հոգեւորական, օրհների ազատութեան զինորենիքին...

«Սկսանելու ժամանակը չէ... Համախմբուներ, հայեր, և քաղութեամբ
առաջ տաններ հայրենիքի ազատութեան սուրբ գործը»:
«Երկրորդ և երրորդ մանիֆեստը հրատարակւած են, հասանակա-
նորէն, 1891 թի սկիզբները — «Հնչակ»ի հետնապէս լետու — և անոր
արդէն կը կուրին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և Դրօշակի հրա-
տարակութիւններ:

«Երկրորդի մէջ կը կարդանք.
«Մարտիկնի կռիւր այժմեանից յուսահատեցնում է թերահաստ-
ներին: Նորա հարցնում են, ի՞նչ կարող է անել հայը. ոչ թնդանաթ ունի,
ոչ զորք, ոչ պաշտպան: Անկարող թերահաստութիւն... Երբ ժողովուրդը
միացան է և պատրաստ կուլուտ, ոգևորում միևնոյն վե՛հ զգացմուն-
քով — այլ նա ոչինչ չարժէ ոչ թշնամու զորարանակը, ոչ թնդանաթ»
և ոչ օտարի պաշտպանութիւնը...»

«Երրորդ հրովարտակը նազ պսթեթիկ սէ մը ունի, անի շափաւոր
ու խոճանան.

... Սկսպիսի ոգևորիչ և քրտաշարժ լուրեր են հասնում մեզ զս-
նազան հայաբնակ տեղերից: «Դաշնակցութեան» գործակալները ան-
հաղար հարցնում են մեզ. «Ե՛նչ պատասխանել այժմ գրաւած ժողովրդ-
դին, ի՞նչ էլը պէտք է տայ նրա վե՛հ զգացմունքին»:

Հայ ժողովուրդը անսահման անմեղսութեան ապացոյցներ է տա-
լիս. զա արդէն անհերքելի է: Բայց լոկ անմեղսութիւնը բուսական չէ
այդ մեծ ու սուրբ գործի համար... Անհրաճեշտ է լինել հետատես և
զգոյլ: Պէտք է ինչպէսդրութեամբ գործ զնէլ մեր ունեցած ուժերը...
Յաղթութիւնը կը տաններ այն ժամանակ, երբ մեր ոյժերը խմբներ մի
բնգհանուր դրօշակի տակ, մեր կամքը հպատակեցնենք մի որոշ կար-
քի, անհրաճեշտ զինքիպիլիսայի... Աղերսում ենք ամէն մի հայրենասեր
հայի այս խօսքերը դրձմել իր սրտում: Թ՛ող ամէն մի հայաբնակ
կենտրոն շարունակ պատրաստի... Բայց ընդհանուր գործ սկսելու հա-
մար թող սպասի մի ընդհանուր հրուէրի: Իսկ Դաշնակցութիւնը կը տայ
այդ հրուէրը, որով նա ցոյց կը տայ և ընդհանուր ապստամբութեան
ժամանակը Տանկա-Հայաստանում:

... Հայ-կըրայրներ, լոյսով, հաստով ու անդրդուլի կանգով զի-
շեր-ցերեկ պատրաստուներ և ամէն բողէ պատրաստ սպասենք, որպէս
կը կարող լինենք մեր բազմաշարժար տանկահայ կըրայրների Քնդհա-

* Մտտ 30 տարի շունչերն արդէ ոչ մէկ օրհնակ: Ռուսոսը պատանմամբ ձեռք
բերու այն 1917ին, Առաւելուրդի մէջ, Փետրարեան Յեղափոխութենէն լետու: Գլու-
ցնում է ցարական գաւտնի քաճանմունքի արշիվներու մէջ, ուրիշ կարեւոր ու հազ-
արգիտ վավարարույթերու վետ: Տպած այդ թուրքիցը քաղաքում չէ. քայք. քառ Ռու-
սոսի, Ռուսաստանում է 1890ին, սեւուշու, այլ օրհրուն երբ Հեշակեան Առաւելուր-
թիւնը յանձնել խանագաւտի, յայտարարել էր իր միացումը Դաշնակցութեան մեջ:
Սուրբասում է Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը:

** Հասարական խմբագրութեան արդիւնք են նաև «Դրօշակ»ի առաջին տարի-
ներու շարք մը առաջնորդող յօդուաները:

Նոր Ապստամբութեան նշանին անմիջապէս արձագանք տալու:

Ապա թուօցիկը կը բերէ շարք մը թղթակցութիւններ Քուրբանջ Հաստատանէն, ցոյց տալու համար «ապստամբական շարժման կենդանութիւնը»:

Անասհման լուստեսութիւն կը ցոյցնեն Կազմակերպութեան վարչչները ժողովուրդի ազատամբական տրամազորութիւններու մասին և, հակառակ խոհականութեան և զգաստութեան Տրախրոզ քանի մը միջանկեալ տողերուն, այդ թուօցիկները, ինչպէս և «Երօշակօի առաջին թիւերու յօդանունները, կը մասնեն ծայրաւեց, անհաստարակչիտ հոգեվիճակ մը — միանգամայն բնականօտ այն օրերուն համար:

Քիւ առաջին «Երօշակօի մէջ կը կարդանք.

«Կար ժամանակ, երբ միայն խրախոյս և խօսք էր հարկաւոր ժողովրդին սթափեցնելու մասնացու, ստրկական բնից, այժմ նա զարթել է և... պահանջում է իրաքանչիւր հայից ոչ միայն խօսքեր. «Ձէ՛նք, զէ՛նք... ազալում է ընդդիմազորութեան բոլոր միջոցներէից զուրկ հայ ժողովուրդը»...

Ճի դարձեալ, թիւ 2-ի մէջ.

«Քարերահտարար, այսօրեայ հայ յեղափոխական գործին ազատւած է... նախապատրաստական գործունէութիւնից. մեր վերջին տարերեան տարայն պատմութիւնը, տանկական իշխանութեան անտանկի պայմաններն այսօր տալը են բերկ մի յեղափոխական ազգութակութիւն, որ միայն այդ հանգամանքի է ապաստմ թօթափելու իրանից տանկական լուծը: Այսպէս կարծելու համար մեզ իրաւունք են տալիս Տաճկական Հայաստանից հասած բազմաթիւ տեղեկութիւնները»...

Քարգուլութեան, ուսումնասիրութեան շատ ալ պէտք չկայ, ժողովուրդը արթնցի է, պարտաւա է, զէնք կուզէ միայն. նա պիտի լաղթէ անգամ թեղանթներուն և կանոնաւոր բանակներուն... Ընդհանուր ապստամբութիւնը պիտի գոյ և նոյնիսկ... ազգանշանով:

Այդպէս էր ընդհանուր հաստատ ո համոզումը 90ական թականներու սնիդները, այդպէս էր տիրող հոգեբանութիւնը Հայոց մէջ — վարպագեղ, բուն, զահամիտող տրամազորութիւն մը, որ կը վարակէր անգամ ամենէն զգաստ, պազարին առաջնորդները...

* * *

Շարժումը տարբային էր: Նոր կրօն մը կ'ալիկոծէր հայ աշխարհը, նոր եկեղեցի—Հայ Մարտական Կազմակերպութիւնը— որում առջեկ կուգային խոնարհելու բոլոր եկեղեցիներու հաստատեցեայները՝ լուսա-

տրլական, կաթողիկէ, բողոքական: Տպարօրէ, հազադիտ տեսարան մը կը պարզէր հայոց Անդրկովկասը — գաղափարային թռչններու և շրջկը պարզէր կիրքերու թատերարքամ: Ազգային գաղափարը, վեց դարու զենութեանէն յետոյ, կը տարածէր հնգկի մը կատաղութեամբ, զոր ոչ մէկ թուժ կը կանգնեցնէր: Կուսակցութեան գործակալներն են, որ անդադար կը հարցնէին Կեդրոնին. «Ի՞նչ պատասխանէ զրոգովրդին, ի՞նչ կը պէտք է տալ»... և այլն:

Որքա՛ն անելի ուժեղ էր յափշտակութիւնն ու կուփ տեղը կիսազրազուտ և պարզունակ երիտասարդներու մէջ, որոնց աչքին գաղափարը ամենազօր ու անլաղթիկ բան մըն էր. Հայոց ազատութեան դատը—այնքան արարար, ջինջ ու վե՛հ էր... Ճի որպի՛սի զերարհաստում սեպական ուժերու: Ճի որպի՛սի արհամարհանք զէպի թշնամու ոյժը... Շափերու աչքին Քուրբանջ քայքայած, մահամերձ պետութիւն մըն էր. բուսական էին քանի մը հարած— և ներուպան պիտի միջամտէր և մեծքարը պիտի իրագործէր...

Հայութիւնը՝ անպարտելի հսկայ մը, Քուրբանջ՝ դաճած մը...

«Չեթի՛ք, որգեակի... Մեր բաներն էլ կանեն ճոցա շանտաակի»...

Հայկական շարժման ոտմանտիկ շրջանն էր: Քուրբանջ ապստամբ ժողովուրդներու և զիրին խանդավառութիւններու շրջանը: Բոլոր ապստամբ ժողովուրդները ունեցիք են այն: Ինչպէս անհատի, նմանապէս իրաքանչիւր ժողովուրդի կենսքին մէջ կայ «վերթերեան», «հերոսական» այնչըջանք — օրեր հսկայ, կենսարար երանգներու, օրեր անզուսպ, անչափարգ պատանեկան իդքներու, երբ արթնցող ժողովուրդը, տակալին զհակացութեան սենին վրա, կը փորձէ խօյ թռչններով իրագործել անկարելին, կը ծառանայ խիզախօրէն վիթխարի արգիւթներուն զէմ և կենսքի վրա տեղանքով կըլուծ կընէ—Մահու...

Այդպէս կը բերորէ այդ ապստամբ ճոգեվիճակը ինքը Գեօթէ, ոտմանտիզմի հանճարեղ ոտմակիրը:

Վիպական շրջանն էր — և անոր ամենէն բուն արտայայտութիւն եղաւ Կուկունեանի արշաւանքը: Հնչականներու գրեթէ ամբողջ ամիտասպին—գործունէութիւնը 1980—94 տարիներուն անցաւ նոյն ոտմանտիկ ճոգեբանութեան նշանակին վրա բազմաթիւ էին «խենթները», սերվանտէտան հերոսները, տարարին ու վեհանմն սուպետներու և ամէն տեսակ ազանդատներն ու մոլիտաղներ... Մթնոլորտը ինքու էր վառօքի զինովցուցիչ: բուրմունքով, թմբուն ու միտրով, հառերով, երգերով և թևատը նշանարաններով. «Ամենայն տեղ մահը մի է»... Ազատութիւն կամ մահ... «Յաղթել է կամ թէ պատուով մենի»... Ը զանտ-

նեան մարտակոչը— «յանգզովի՞ն՛, յանգզովի՞ն՛, գարձնայ ու միշտ յանգզովի՞ն՛...»

Ա՛հ, «խո՛հաններ», «հաստարակչու՛ած» խելօրները, հանգիստ ու կոշտ փրթողները, պորտաբոժ անտարբերները կը դարձանան, անշուշտ, երիտասարդներու, «խնկն» ու ինչպա տպաներու այդ անգոյապ թռիչքներուն հանդէպ— անոնք չեն հայ յեղափոխութեան կոչեցեալ գատախազները: Ամբողջ հոյակապ իտալական զիջագնամարտը կատարեր են 25—30 տարեկան «շաղկիւն» և անոնք զրեթէ հասակակից էին ծրանակնան Յեղափոխութեան մեծանուն զերկատարները:

Ու նոյն այդ երիտասարդներն էին, որ օր մը— գարնուրեյի, ճակատագրական օր մը— Ղարաբիխէի բարձունքներուն, Սարգարապատի դաշտին վրա զրո՛հ տին ինեթ մօլեզովի, օր մը ի պատիւն... Երիտասարդովի՞ն՛ը— գաղափարական շարժումներու և բոյոք խզար ձեռնարկներու յառաջագանն ու զրօշակակիրը:

Երիտասարդովի՞ն՛ը— յոյսի և հաստի, բոյոք ազնի կիրքերու խանձազա մարմնացումը:
Երիտասարդովի՞ն՛ը— բանկայական զնգաններու և կախաղաններու մշտտոտա ողջակէզը, ազատութեան հրօճի յախտեմական վառնանիքը...



Ուժերու անասման շիրա՛ւ՛հաստութիւնը և մօտայուտ յաղթանակի հասար կը մեկնէ յախտեմ, հաստային թռիչքներ: Ծպատա՞կը: Գալոց Հայաստանի քաղաքական կա՞զմը... Ասով շատ ալ չէին մտահոգեր... «Քան մը, անշուշտ, պիտի բլլայ...» «Բուստարիոյ պէս բան մը»... «Իրանեանի պէս բան մը»...

Հակա՛նը կոհին է, մնացածը երկրորդական է^{*)}: Ու կոհի բոյոք ձե-

*) Կարծէք ճոյն ճշմարտացի կը հնչէր ևս բուն իսկ վարդիւնութիւնը շարժերուն: Եւականը գործն էր. իսկ նպատակը, ծրագիրը, արագալստ կատարումները՝ երկրորդական բաներ էին... Ուշագրաս է, որ իր հիմնարկում օրերէն զրեթ մարտը Յ տարի Հ. Յ. Դաշնակցութիւնը չուներ ծրագիր, սպան վրա գրան... Թէն արդէն կտակարարական գործիչները մասատուտ էին երկրի շարք մը կետերէն, օրնագործարարը կը բանէր Թարախի մէջ, զէնքերը կը փոխադրէին երկիր. իսկ Կովկասը պատու էր ղաշնակցութեան կամրուներու ցանցով: Միջնում ծրագիր ևս մարմնավոր գործ.— այսպէս էր կարգադասը: «Մերք գործի կուսակցութիւն էնք».— շատոց այսպէս յայտարարեւր էին Դաշնակցութեան հիմնադիրները: Զինակիր խումբ մը, որ մեզ

կերը ընդունելի են, կիրքական: Զարկ տանկին ու բիրքիցի ամէն տեղ, ամէն պարագայի տակ: Զարկ և ներքին ոսոխներուն, ուխտադրու ընկերներուն, ամէն կարգի հայ ցեղերուն, գաւաճաններուն, լրտեսներուն, մտակիչներուն: Զարկ, վրէճ... ։

Ու ի՛նչ խօսական ձևեր կտաներ վլեժիկացութեան տենչը... Ոչ միայն թշնամու, այլ և հայ մարտը հանդէպ: Յունօի գլխուն մէջ նըստին և սեռուն գաղափար մը — Թոխմախեան լրտես մըն է: Գաւաճան մը... Արտէն թոխմախեան, կարագի արծիկներէն, երթմանի քանցարու աշակերտներէն, օր մը շարաւար կը խոշտանարէ Յունօի ձեռքով (կրտսն նոյնիսկ, թէ ողջ ենուեր է թոխիրի մէջ և ալրեք), որովհետ (կրտսն նոյնիսկ, թէ ողջ ենուեր էր — բնաւ չսխառտած — թէ իբր նա պաշտօն ուներ շրիք կտավարութեան լրտեսիււ հայ յեղափոխականները կողմասի ու Պարտիստանի մէջ^{*)}):

Մեր բոյոք հին ընկերներէն միայն պարտաւոր լսած ենք այդ եղբայրական զէպքի ասքիւ, որ կատարուր է առանց վերին մարմնի գիտութեան, զտու անձնական կամ Թայֆոսական հոգի վրա:

Ահա ուրիշ ոճի մը: Նոյն 1891 թականին Կերեկցեանը սպանեցաւ չորս ղարաբայի մէջ, տեղուց կնքը. Կոմիտէի որոշումով: Սրացաւ հայ մարտ մըն էր, մէկը 1882ին բացաւ կարճօր զարտին ընկերութեան զնկավար մըն էր, որ չորս տարի բանտ նստեւ էր: Անոր «յանցանք» այն եղած էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները, խոհեւ էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները, խոհեւ էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները, խոհեւ էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները, խոհեւ էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները, խոհեւ էր, որ կը մերժէր հաղշտայ յեղափոխական զործողութիւնները...

Մարտափնիքն այն է, որ այդ երկու երայրասպան ոճիրներու ճեղքնակը կը հանգիստանաւ հայ շարժման երկու հիմնալուսք, զէմբեր, մէկը՝ Յունօս, վանեցի ֆէդայիին՝ միայր՝ էրքրումցի Արամեանը, Աշոտ-Սարգիս, վանեցի ֆէդայիին՝ միայր՝ էրքրումցի Արամեանը, Աշոտ-Սարգիս, վանեցի ֆէդայիին՝ միայր՝ էրքրումցի Արամեանը, Աշոտ-Սարգիս, վանեցի ֆէդայիին՝ միայր՝ էրքրումցի Արամեանը... Այսպէս խոսեցեր են Կերեկցեանեանի վրա, երեք տարան բանտարկութենէն լետոյ: Այսպէս խօսեցեր են Կերեկցեանի վրա, երեք տարան Կովկաս, ուր և ամբողջ տարիներ թաքնեցաւ: Կերեկցեանի կերպը երկար ատեն հետա-

Առանձնակ նրացան ու ուղարկ կը փոխադրէր Հայաստան, առկի մեծ արժէք ուներ մերոց աչքին, քան տառնակ ծրագիրներ զոցը քաղաքական-քննչային կարգով մասին: Վերայք տեղի է ունեցեր 1891ին Կախալայի վանքի մէջ: Թոխմախեան վանքի էր, բնական ատեն ուսուցիչ եղած էր Ազովի մէջ ևս վերջ վարպետական ձևով:

պրնդից զինքը և չգտնելով, սպանեց Քիֆլիզի մէջ Աշոտի մտերիմ ընկերներէն—Օբոյնանք, որ նոյն Կարնոյ Կնդր. Կոմիտէի անգամ եղած էր:

Գաշնակցութեան Կնդրոնը 1890 թուականին, Արամեանի ներկայութեան, դատաւարտեց անոր քայլը և այդ առթիւ հրատարակեց յատուկ բնուցիկ մը: Կնդրոնը հակառակ եղբր էր Կերեկցեանի զէմ արձակած վճռին և, այնուամենայնիւ, Կարնոյ կոմիտէն իրազործէր էր վճիռը: Յնդափոխական կարգապահութիւնը դեռ խիստ կը կազար այն օրերուն...*)

Վերջիշնք և Մարկաւազի սպանութիւնը, որ նոյնպէս զժար է արգարացնել: Ուրիշ նման զէպքեր ևս, տարարարտարար, եղբր են մէր յեղափոխական շարժման բնթացիին. — անխուսափելի, աւա՛ղ, նոյնիսկ մեզմէ աւելի բարձր ազգերու մէջ: Յիշենք միայն Ֆրանսական Մեծ Յնդափոխութիւնը, երբ մարդիկ կը կոտորէին ամենաթիթեւ կասկածներու հիման վրա, մատնութեամբ կամ պարզ, անձնական թշնամութեամբ: Հայկական իրականութիւնը միայն աւելի զսթան մեթոզներ կը բերէ այդ կարգի մարզանքներուն մէջ...

*) Հետագային, Սոփիայի Ընդհանուր Ժողովին մէջ (1904 թ. Յունար) պարզեցաւ, որ Կերեկցեան դատանա մը չէր եղած, անշուշտ, իսկ խիստ կրտս մտերմ վարած է իր արօսպագնը նոր յետափոխական գործիչներուն դէմ, անարգելով գտնոր նրապարակաւ, սրճարաններու, խանութներու մէջ...

ՂԵՎԱԿԱՐՆԵՐԸ

Հայ շարժման զաղափարային ներողութիւնը.— Քրիստափոր, Չաւարեան, Ռոստոմ.—

Անցաւ կամայ-կամայ զաղափարներու շփոթը, փարատեցաւ հնարը հեռէ ռոմանտիզմի մշուշը և նրիտասարղ Հայաստանը յանգեցաւ իրականութեան աւելի զգաստ ըմբռնումի — իր պարտականութեանց աւելի յստակ գիտակցութեան: Մտեզմեցաւ կուտ, կարգապահ յեղափոխական կազմակերպութիւնը — Հայ Յեղափոխական Գաշնակցութիւնը — իր ընդարձակ ճիւղատարումներով, նախ Կովկասի, ապա Քուրդիոյ և Պարսկաստանի մէջ, զուեցաւ իր պատահական տարրերէն, դատարարակեցաւ անձնազոհութեան և զգաստ, առողջ հայրենասիրութեան զպրոցիին էջ, իր մեծ վարպետներուն շունչին տակ:

Այդ վարպետներին մէկը վազածամ աշիք զարնեցաւ զաղափարական մտատրականութեան շարքերում, իր արտակարգ կազմակերպական տաղանդով, մէկը՝ որուն վիճակած էր ուժեղ ձեռքով զարնել Կուսակցութեան ճակատագիրը —

Քրիստափոր Միխայիլեան:

Նախկին «աշխարհաբազարացի» Քրիստափորն էր, 80-ական թուականներու թիֆլիզեան խմբակներու Քրիստափորը: Նա, որ Քուրդահայաստանի զէպքերու ազգեցութեան տակ լքեց պարսպ կոստպոլիտիզմի աւետարանը և հոգով-սրտով փարեցաւ հայ ազգային շարժումին: Նա էր, որ Քիֆլիզի մէջ կը զեկավարէր Մշեցիներու «ինքնազարգացման» խումբը — Արարո, Մարգար վարժապետ, Քաւոր Պետրոս և այլն — կը սորվեցնէր գրել-կարգալ, բնագիտութեան գասեր կուտար և միաժամանակ կը դատարարակըր զանոնք յեղափոխական ոգիով:

1880-ին՝ ուսումնասարտ Քիֆլիզի Ռուսցական ճեմարանէն, ապա ուսուցիչ էր ծնեղավար Արուսիսի մէջ, Բաֆիէին յետոյ, 1885 — 87-ին՝ Ազատ ունկնդիր Մոսկւայի համալսարանում, 1889-ին՝ նորէն ուսուցիչ Ազատ ունկնդիր Մոսկւայի համալսարանում, 1889-ին՝ նորէն ուսուցիչ Ազատ ունկնդիր — այն ժամանակ, երբ Քիֆլիզը կապէր խմորումի ետպղեոր:

Հնունքն էր դիտել զայնց վարպետը կովկասեան մայրաքաղաքի հայ երիտասարդութեան իրարանցումս և հանդարտ, համեստ, առանց գահազնկմի, առանց թմրուկի ու բերբամբի եր սպասել իր անխուսափելի թատերամտի տամուս: Եւ էր մար հասուս ու զիբը կանչեցին Քիֆ-իլզէն, նա զնաց նեւանցաւ իր կախարհէ անձնաւորութեան ամբողջ թափով հակամարտ խմբումներու տեղեային վիճարանութեանց ժխորին մէջ, լեզուքացուց կեդրոնախոյս հակումները, հայտնեցուց ու միացուց հակոտնենտի եւ հարթեց ճամբան լեզուփոխական միացեալ կազմակերպութեան:

